



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



4463

613-88 Лимонник

R-91 Мелисса лимонная

Лимонный лист шоколадно-
сладкий

VII-2228 26/VI-28

Te-455 1/2-28

VII-# 6667 23/VI-80

VII-# -1103 24/VI-80

VII-#-2202 17/VI-81

ԲՓ. Ա. ԲՈՒԴՐՈՒՂԵԱՆ

ՄՏԵՐՄԱԿԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ



13.88
2-91

11.03.2013

20 JUL 2010

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՅԱՏ. ՏԻԿ. ԶԱՐԵՒԻ

1. ՔՈՐԸ ԵՐԳՈՒՄ է 10 ԿՈՊ.
2. ՃՇՄԱՐԻՑ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ 7 ԿՈՊ.

Մամուկի տակ է

ՄԵՇ ՄԱՐԴ

ԴԻՄԵԼ՝ ԹԻՖԼԻՍ ԿԵՆՂՐՈՆԱԿԱՆ Կ ԳՈՒԹՄԵՋՔԵՐԱ
Բաքու Պրոմեթէոս գրախանութներին.

Ի. ՖՐԱՊԱՆ

ԱՆՏԾՈՒԱԾ ՎԱՅՐԸ

ՆՈՎԵԼԱ ԿԹՎԱՍԻ ԿԵԱՆՔԻՑ

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

ԱԿՆԱՐԿ ՀԻՆ ՀԱՅ ԲԱՆԱՀԻՄՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

10

-ԲՈ

ԲՓ. Ա. ԲՈՒՊՈՒՂԵԱՆ

613.88

F-91

ՄՏԵՐՄԱԿԱՆ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ

Ի՞նչպէս է կատարւում աճեցումը բնութեան
մէջ։—Սեռական հասունութեան ժամանակը։
—Հոգեկան ու ֆիզիքական փոփոխութիւններ։—Օնանականութիւն։—Ներվային մանուկները։ Մնողաց պարտականութիւնը։—
Օնանականութեան լիասները։ Նրա նշաններն ու առաջացնող պատճառները։—Ի՞նչպէս
պէտք է նրա առաջն առնել և հետը մարտնել։—Գիտութիւն, ներշնչում. վերջին խօսք։



Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ
ՊՈԽՎԱԿԱՆ ՏՊԱՐԱԿ

1904

2892

09-83

Дозволено цензурою. С.-Петербургъ, 7 Апрѣля 1904 года.

1730
147.
871 29/м-39

1005

5/12/29

II.

Քանի գեռ մանուկ ենք, պէտք է որ մեղ կերակրեն, ուսուցանեն. այդ հասակում լիովին կախուած ենք ուրիշներից ու ստանում ենք ամեն բան և ոչնչ չենք տալիս:

Երբ որ չափահաս ենք դառնում, այն ժամանակ հոգով ու մարմնով ամրապնդուած՝ հասնում ենք ամենաբարձր ծաղկման և վճարում ենք մեր գէպի ընտանիքն ու դէպի հասարակութիւնն ունեցած պարտքը:

Այդ ժամանակից սկսած կարող ենք ոչ միայն պահպանել ու կերակրել ուրիշներին, այլև նոր կեանք առաջայնել, մեղ նմաններ ծնել:

Մանկութիւնից դէպի առնական հասակն անյնելու ժամանակամիջոցը ամենափոթորկալից, ամենավտանգաւոր շրջանն է մեր կեանքի մէջ:

Մարդուս, ինչպէս նաև ընդհանրապէս բնութեան մէջ, ամեն մի քայլը կռուով է ձեռք բերում:

Տասնեչորս—տասնեվեց տարեկան հասակում շատ բան գիտենք, կամ կարող ենք, թէկուզ առանց

զիտութեան օգնութեան, հասկանալ, թէ ի՞նչ է
առաջացնում մեր մէջ ծնունդ առնող ու հասունա-
ցող սեռական զգացմունքը, սեռական ձգտումը,
դէպի միւս սեռն առաջացող ձգտումը:

Եւ հէնց այդ հասակումն է, որ առանց զեկի,
առանց փորձառու զեկավարի են թողնում մեզ:

Ինչպէս որ ծովագնացին անհրաժեշտ է փարո-
սի լցուր, որպէս զի անփտանգ անցնի խոչ ու խու-
թերի միջից, այնպէս էլ պատանին պէտք ունի
ընդարձակածաւալ լցուր, որը միայն զիտութիւնը
կարող է տալ:

Պատանու մէջ արագ ու հզօրէն հասունանում
է այն, որ բնութիւնը զրել է նրա մէջ, նա իւր
մարմինի ամեն մի մասովն զգում է այդ բառի բուն
նշանակութեամբ նա վառում է, յուզեռում, տանջ-
ւում:

Եւ այն, ինչ որ չի լուծում ընտանիքը, ինչ որ
չի պարզում ուսումնարանը, ամենայն սիրով բացա-
տրում են հասակաւոր ընկերները, զանազան բալետ-
ներն, այլանդակ վէպերը և այլն:

Արդէն 15—16 տարեկան հասակում մեր պա-
տանիները շատ բան զիտեն գործնական կերպով.—
Քանի քանիսն արդէն օնանականութեամբ են զբա-
զուած:

Պէտք է նկատել, թէ ով որ մանկական և
պատանեկան հասակում շատ է պարապել օնանա-
կանութեամբ, նա արդէն 'ի հիմանց խախտած է
լինում մաքուր, վսեմ ձգտումը դէպի կինը, նա
երբէք չի ճաշակել կատարեալ երշանկութիւն, նա

թուլացրած է իւր մէջ եռանդի և բաջութեան աղ-
բիւրը:

Անշուշտ, ով որ կարողացել է անժամանակ
չվատնել իւր սեռական ցժը, նա էլ աւելի քաջ ու
կնսունակ է լինում կեանքի մէջ:

Օնանականութիւնը՝ գժբաղգաբար, սպառում
է այդ ցժը: Բայց քանի քանի պատանիներ, այդ
խութից ազատուած՝ խորտակւում են մի այլ խու-
թի հանդիպելով:

Նրանք՝ դեռ իսկական սէր չճաշակած, որը
նոր-նոր զարթնող սեռական ձգտման ամենամա-
քուր և վսեմ արտայայտութիւնն է կազմում, մո-
լորեյնում են կնոջ յանուն կրքի, կամ, որ աւելի
տարօրինակն է, յանուն առողջութեան:

Իսկ աւելի ևս շատ են այնպիսի պատանի-
ներ, որոնք առանց երկար մտածելու փողով գնում
են կինը, ինչպէս զնում են միրգ, բաղցրեղէն կամ
մի այլ իր:

Ոչ մի կասկած չկայ, որ ով որ պատանեկան
հասակում փողով կին է գնած, երբէք կարող չէ
ճաշակել ճշմարիտ սէրը, որ աշխարհիս երեսին
ամենայն ազնիւ գործի ամենագլխաւոր աղբիւրն է
կազմում. երբէք չի տածիլ այն խորին յարդանքը,
որին արժանի են իրենց եղբայրակիցների քոյրերն
ու աղջիկները:

Առաջները, պատանու կամ աղջկայ արբունքի
հասնելլ՝ բոլոր ազգերի մէջ և բոլոր դարերում էլ
նշանաւոր գէպք էր համարւում ընտանիքի, ամ-
բողջ հասարակութեան, բոլոր պետութեան համար:

Դրան առաւել կամ նուազ չափով հանդիսաւոր ձև էին տալիս և խիստ փորձի էին ենթարկում, որից յետոյ միայն կրսկսէին հանդէսը կատարել:

Նոր սերունդը իւր կեանքի ամենավեհ բոպէին չէ թէ թաքուն տեղերում, մենակ էր անցկացնում, հապա հանդիսաւոր կերպով, հրապարակով:

Եւ ամենքն էլ զգում էին այդ բոպէի վեհութիւնը. ամենքի համար էլ պարզ էր, որ այստեղ բանն այն չէր, թէ հօտին մի արու կամ մի էդ էլ աւելանում, հապա այն, որ քաղաքացի էր աւելանում:

Սրբունք կամ սեռական հասունութիւն-նշանակում է ֆիզիքական ոյժերի և մտաւոր կարողութեան ամենաբարձր դարձացումը, ծաղկելը:

Ոյժ, ծարպիկութիւն, տոկունութիւն, անվեհերութիւն, ողջախոհութիւն և միենոյն ժամանակ իւր ազգի աւանդութիւններին հմուտ լինել, և զիտենալ որոշ չափով փորձնական զիտելիքներ—ահա ինչ է պահանջում արբունքի համոզներից:

Բայց այդ բոլորի փոխարէն արուած վարձն էլ արժանի է դրան. —բարոյական և հասարակական իրաւունքների կատարեալ հաւասարութիւն՝ հասակաւորներին համահաւասար:

Ի՞նչպէս պէտք է վերաբերունք դէպի այզպիսի փաստերը:

Ամեն մի մարդ իւր ազգի զաւակն է, իսկ ամեն մի ազգ էլ մարդկութեան մասն է և կարող չէ ընդհանուր արմատից անշատուել, ապա թէ ոչ կչորանայ:

Նման երկրագնդի բոլոր՝ թէ արդէն անհետացած և թէ ցայժմ գցութիւն ունեցող ազգերին, մենք էլ պարտական ենք լրջօրէն խորամուխ լինել նորատի սերնդի կեանքին, այդ կեանքը կառավարող բնական օրէնքներին, որոնք երեխաներին՝ այր, իսկ աղջկերանց կին են դարձնում:

Այս խնդրին կանոնաւոր կերպով վերաբերուելու համար անհրաժեշտ է ի մօտց ծանօթանալ մարդուս մարմնակազմի մէջ կատարուող այն փոփոխութիւններին, որոնք առաջանում են սեռական գործարանների զարգացմամբ:

Սեռական զգացողութիւնը սեռական արբունքից—հասունութիւնից—առաջ է զարգանում. սակայն սեռական արբունքը, հասունութիւնն էլ զեռառնական տղամարդու հասունութիւն չէ, մանաւանդ կուլտուրական (զարդացած) երկրներում:

Սոնականութիւնն աւելի ուշ է գալիս. սակայն ամուսնանալու համար զեռ այդ էլ քիչ է. —հարկաւոր է նաև հոգեկան հասունութիւն, հարկաւոր է ուսում առնել, ինչպէս ասում են, գիրք ստանալ. մէկ խօսքով սեռական հասունութիւնը (արբունքը) ամենեին հռմանից չէ մարդկային անհատի ընդհանուր հասունութեան:

Տեսնում ենք, որ եւրոպացի տղամարդիկ սովորաբար ամուսնանում են 25—30 տարեկան հասակում, մինչդեռ արբունքի են հասնում 14 և 16 տարեկան միջոցին:

Բնական օրէնքներին հակառակ, կամ թէկուզ չէնց ոչ հակառակ միջոցներով սեռական կարիքնե-

րին բաւականութիւն տալը — օնանականութիւնը —
անկասկած մեծ վնաս է պատճառում մարդուս թէ
առողջութեան և թէ ընդունակութիւններին, և յա-
ճախ, մանաւանդ մանկական հասակում, մինչև իսկ
մահացու է:

Բ.

Ամեն մի առանձին էակ, լինի դա բոյս թէ
կենդանի, ծնունդ է առնում, աճում է, բազմանում
և ապա մեռնում:

Կան շատ մանր էակներ, որ միայն մանրագի-
տակով են երեսում. դրանք կենդանի նիւթի մի փոք-
րիկ կտորներից են միայն բաղկացած:

Սյդ մանրիկ կտորը, որ պրոտոպլազմա է կոչ
ուում, ունի այն բոլոր յատկութիւնները, ինչ ո-
տեսնում ենք խոշոր մարմնակաղմների մէջ. դա
ինքն իրեն շարժւում է, սնում, աճում և բազ-
մանում:

Պրոտոպլազման երկրիս վերայ եղած ամենայն
կեանքի հիմքն է կազմում, ամեն մի պրոտոպլազ-
մայի ինքնուրոյն ապրող կտոր պայմանաւորուել են
մարդիկ վանդակ-բցիչ, կոչել:

Կան բոյսեր և կենդանի էակներ, որ միայն
մէկ վանդակից են կազմուած. կան այնպիսիներն էլ,
որ միլիոնաւոր վանդակներից են բաղկացած:

Անշուշտ լսած կինքը բակտերիաների, նրանց
սաղմերի մասին, որ միլիոններով վիստում են օղի,
չըի, հողի մէջ, և մեր ներսը. — դրանք լինում են

զանազան ձևի և մէծութեան, նրանք ապրում են,
այսինքն՝ ուտում են, ածում, բազմանում: *)

Այս մէկվանդականի մարմնակաղմների նշանա-
կութիւնը բնութեան մէջ շատ մեծ է — նրանք մաս-
նակցում են ամեն տեսակ նեխման ու խմորման
դորձողութիւններին:

Այնպիսի բակտերիաներ էլ կան, որոնք մար-
դուա մարմնի մէջ մտնելով՝ շատ վտանգաւոր, յա-
ճախ մահացու հիւանդութիւններ են պատճառում.
այսպէս օրինակ ժանտախտի, խոլերայի, ժանտա-
տենդի (տիֆ), կեղծածաշկի (դիֆտերիա), թոքախտի
և այլ հիւանդութիւնների բակտերիաները:

Մէկվանդականի մարմնակաղմներից յետոյ տօ-
մարդանաբար բարձրանարով համում ենք առաւել
բարդ, բազմավանդականի մարմնակաղմների:

Խոճորենին, օրինակ, բազմավանդականի բոյս
է. Նրա մէջ կան միլիոնաւոր պրոտոպլազմայի ինք-
նուրոյն կենդանի կտորներ, որոնք վանդակ են կոչ-
ում:

Եւ զարմանալին այն է, որ այդ վանդակները
խմբուած են առանձին առանձին, իրենց յատուկ
պաշտօնի համեմատ. — խմբերից ոմանք արմատ են
կազմում, ոմանք՝ տերեւ, ուրիշները՝ ծաղիկ, չոր-
րորդը՝ պտուղ և այլն:

Ամենակատարեալ բազմավանդականի էակը
մարդս է:

Եւ ի՞նչ ենք տեսնում. — տեսնում ենք, որ

*) Տես իմ «Կաշուի հիւանդութիւններ» գիրքը.

մեր մարմնի մէջ աշխատանքի բաժանումը զարմա-
նալի նրբութեան ու մանրակիտութեան է հաս-
ցրած:

Ուղեղը ստանում է արտաքին աշխարհի տպա-
ւորութիւնները և, դրանց վերայ հիմնուած՝ մտա-
ծում է:

Սակայն ուղեղի բոլոր մասերն էլ միւնցին
գործը չեն կատարում: — Նրանք աշխատանքը բա-
ժանել են իրար մէջ. ոմանք լսում են, ոմանք՝ տես-
նում, ոմանք՝ համ առնում, ոմանք՝ հոտ զգում
և այլն:

Ստամոքսն էլ զանազան գործեր է կատարում.
Նրա մասերից ոմանք շարժում են կերածը, ունանք՝
մարսում են օսլան (կրախմալ), ուրիշները՝ մար-
սում են սպիտակուցը և այլն:

Սյսպէս ուրեմն, մեր մարմնի բոլոր մասերումն
էլ եռանդով գործ է կատարվում աշխատանքի բա-
ժանման վերայ հիմնուած:

Թէպէտ դրանց աշխատանքը տարբեր է, բայց
ամենքի նպատակն էլ մէկ է. — ամբողջ մանմնակաղ-
մի բարօրութիւնը:

Եթէ ուղեղը սկսի 'ի վնաս ստամոքսի աշխա-
տել, կամ թէ ստամոքսը աշխատի 'ի վնաս ուղեղի,
դրանից քայքայւում է ամբողջ մարմնակաղմը, իսկ
մարմնակաղմը կարող ենք նմանեցնել մեքենայի:

Ամեն մի աշխատանք իւր ելքն (ծախս) ունի. —
գործ է դրւում նախ նիւթ, երկրորդ՝ մոշւում են
հէնց իրեն՝ մեքենայի զանազան մասերը: Նոյնն է
նաև բուսական և կենդանական մեքենայի վերա-

բերմամբ. — նրա կեանքը պահպանելու համար որոշ
քանակութեամբ նիւթ է գործ դրւում, նիւթ է
մսխւում:

Այդ պակասորդը լրացւում է կերակրով. այդ
պատճառով մենք սնւում ենք. մնւում է ամեն մի
վանդակ, այսինքն՝ ստանում է այն նիւթը, որ նրան
անհրաժեշտ է իւր աշխատանքն առաջ տանելու
համար:

Մատաղ մարմնակաղմի վանդակները, որ գեռ
մաշուած չեն; մի այնպիսի եռանդով են աշխատում,
որ մուտքը ելքից աւելի է լինում. ուստի և մա-
տաղ մարմնակաղմները նիւթի աւելորդը ամբարում
են, նրանք աճում են:

Այնուհետև մեքենան սկսում է կամաց-կա-
մաց մաշուել, մուտքը ելքից աւելի չի լինում, որով-
հետև վանդակներն արգէն սկսում են աւելի նուազ
եռանդով նիւթ առնել. աճելութիւնը կանգ է առ-
նում: Ապա մարմնակաղմը սկսում է նուազել, ելքը
մուտքից անցնում է և, վերջապէս, գալիս է մաշը:

Առանձին մարմնակաղմերը մեռնում են, ուստի
և եթէ նրանց տեղը նորերը չբռնէին, երկիրս շու-
տով կդաստարկուէր:

Ներկայումս երկրիս կենդանութեան պատճառն
այն է, որ մեռնող մարմնակաղմերը՝ մեռնելուց ա-
ռաջ, համարեա թէ միշտ նոր, նոյն տեսակ մար-
մնների կեանք են տալիս:

Հետեաբար բազմացումը երկրիս վերայ կեան-
քի հիմքն է կազմում:

Ք.

ի՞նչպէս է կատարւում բաղմացումը:

Ամենաշասարակ եղանակը — բաժանումն է,
այսինքն՝ ծերացած մարմնակազմը, մի որոշ ժամա-
նակ գյութիւն ունենալուց յետոյ, ամբողջովին,
առանց մնացորդի, բաժանումն է երկու մասի:

Հին մարմնից ոչինչ չի մնում, նա դադարում է
այլ ևս գյութիւն ունենալուց և նորա փոխարէն
մեր առաջ տեսնում ենք երկու նորագոյն էակներ,
որոնցից ամեն մէկը շարունակում է բոլորովին չոկ-
չոկ ապրել և ինքնուրոյն կերպով էլ զարգանալ,
մինչև որ նրանք էլ ծերանում են և միւնցն վի-
ճակին ենթարկում:

Բաժանման եղանակով բաղմանալը սովորա-
բար յատուկ է ամենաստորին բոյսերին և մի քանի
կենդանի մարմնների, օրինակ՝ բակտերիաներին:

Մէկ բակտերիան միլիոննաւոր սերունդ է յառա-
ջացնում, բայց բարեբախտաբար, բնութեան մէջ,
բուսական մի աեսակ այդպիսի զարհուրելի ածելու-
թեան դէմ, ի հարկէ ի վեաս միւս կենդանի էակ-
ների, որոշ սահման կայ դրուած: *)

Բաղմանալու միւս եղանակը, որն աւելի կա-
տարեալ է, ծիլ արձակելով է լինում:

Բաժանման եղանակով բաղմանալու գէպըում,
ինչպէս աեսանք, հինգ այն բոպէից, որ առաջ են

*) Տես իմ «Գյութիւն Կոիւ» գրքոյկը:

գալիս աղջիկ — վանդակները, մայր վանդակը դադա-
րում է գյութիւն ունենալուց:

Իսկ ծիլ արձակելով բաղմանալու գէպըում՝
մայրը գարձեալ շարունակում է ապրել, որովհետեւ
նոր սերունդ առաջացնելու համար նրա կազմի մի
փոքրիկ մասն է գործադրում միայն:

Մարմնակազմի մի որեկցէ մասում մի խումբ
վանդակներ հաւաքւում են, ուռչում՝ որոշ զարգաց-
ման հասնելով, քակւում են մօր մարմնից և շա-
րունակում են զարդանալ:

Վանդակների այս խումբը, որ աչք կամ կոկոն
է կոչւում, անշուշտ իւր մէջ պարունակում է ապա-
գայ բոյսի սկզբնաւորութիւնը: Այստեղ, վանդակ-
ների ընդհանուր կազմից անշատուելով, մի առան-
ձին խմբակ են կազմում այնպիսի վանդակներ, որոնք,
այսպէս ասած, յատուկ պաշտօն ունին և իրենց
նուիրել են բաղմացման գործին:

Դրանք շուտով կանդատուին ընդհանուր ար-
մատից և կը կազմեն մի առանձին նոր մարմնա-
կազմ, որ բոլորովին նման կլինի հնին:

Բոյսերի սոխարմատը, վերարմատը, կոշտը
(խիլը) առաջացնում են կոկոն, որը իրենից ցօղուն
և օժանդակ արմատներ է արձակում ու այդպիսով
նոր բոյս դառնում:

Միլ արձակելով բաղմանալու եղանակը պա-
տահում է նաև միքանի ուրիշ գէպքերումն էլ,
օրինակ՝ սպունդի, պոլիպների կազմութեան միջո-
յին:

Երբ մայր-մարմնակազմը հասնում է իւր կա-

տարեալ զարդացման, նրա վերայ մի որևէցէ տեղ
պտղում է մի փոքրիկ ուռոցց, աչք է գոյանում ու
զարդանալով մի նոր մարմին է կազմում:

Նոր սերունդները կարող են շերտ-շերտ աճել
հների վերայ և կազմել ահազին գաղութներ, կամ
բաժանուել նրանցից:

Ծիլ արձակելով բազմանալու գեղեցիկ օրինակ
կարող է լինել հիդրան կամ խմելու ջրի մեջ ապրող
պոլիպը, որ բազմանում է ծիլ արձակելու եղանա-
կով, բայց միևնույն ժամանակ զարմանալի յատկու-
թիւն ունի նաև վանդակների բաժանման միջոցով
իւր մարմնի կորցրած մասերը նորոգելու:

Եթէ նրան կէս անենք, երկարութեամբ կամ
լայնութեամբ, ամեն մի կիսից նոր հիդրա կ'առա-
ջանայ:

Բաժանուելու կամ ծիլ արձակելու եղանակը
կատարուող բազմացումը կազմում են անսեռ բազ-
մացման տեսակը և դրանք յատուկ են ստորին կար-
գի բոյսերին և ստորին կարգի կենդանիներին:

Բայց եթէ ստորին կարգի մարմնակաղմերից
աստիճանաբար բարձրանալու լինինք դէպի աւելի
բարդ մարմնակաղմերը, կ'տեսնենք, որ նրանց մեջ
աշխատանքի բաժանումը աւելի է բազմանում, որ
միշտ աւելի կատարելազործման նշան է:

Ոմանք առաջացնում են ձուիկներ կամ սաղ-
մային վանդակներ, և այդ ձուիկները, մայրական
մարմնակաղմից դուրս զալով, կազմում են սաղմ,
որից նոր մարմին է կազմում:

Զուիկներ առաջացնող մարմիններին անուա-
նում ենք էդ կամ իդական սեռ:

Եւ եթէ դրանց թողած ձուիկը ընդունակ է
զարդանալու ինքն իրեն, այն ժամանակ բաղմանա-
լու այդ եղանակը կոչում է միասեռ կամ «մոնո-
գնիական»:

Սակայն յաձախ, մանաւանդ կենդանիների մէջ,
ձուիկն ինքն իրեն զարդանալ է կարող:

Պէտք է նրանց արտաքուստ գրգող լինի, նման
խմորոցին, որ խմորում է խմորը: Խմորոցից հայ
չի պատրաստուիլ, բայց առանց խմորոցի էլ հայր
անեկ կմնայ:

Իդական ձուի զարդացման համար հարկաւոր
զրդիչն է այն հիւթը, որ սերմ է կոչում, որի հը-
պումից ձուն սկսում է զարդանալ:

Այդ հպումը կոչում է բեղմնաւորումն:

Բարձր տեսակի բցյսերն ու կենդանիները ու-
նին առանձին գործարաններ, որոնք պատրաստում
են սեռական հիւթեր. դրանք սեռական գեղձեր կամ
գործարաններ են կոչում: Կանանց սեռական գեղ-
ձերը—ձուարանները—պատրաստում են ձուիկ. իսկ
տղամարդկանց սեռական գեղձերը—ամորձիքը՝ սերմ:
Հասկանալի է, որ սեռական հիւթերի պատրաստու-
թեանը մասնակցում են նաև մարմնի ուրիշ գործա-
րանները:

Երբ էզր ձուիկ է առաջացնում, իսկ արուն
սերմ, այդպիսի բաղմացումը կոչում է անջատասե-
ռային բազմացում:

Բազմացման այս եղանակը յատուկ է առանց

բացառութեան բոլոր կաթնասուններին, որոնց թրում և մարդուս, որ բնութեան թագաւորն է կոչում, թէպէտ բնութեան այդ թագաւորը գեռ շատ պակասութիւններ ունի, ոտքից սկսած մինչեւ դուխը:

Դ.

Այն բոլորը, ինչ որ աւելի կատարելազործուած ձեռվ տեսնում ենք մարդկանց վերայ, նոյնը տեսնում ենք նաև ոչ միայն կենդանիների, հապա և բոյսերի վերայ:

Սկսենք այն բոյսերից, որ բազմանում են սեռական եղանակով:

Այդպիսի բոյսերն, օրինակ՝ մամուռներն ու փիլիկները, ունին արական սեռական գործարաններ, «անտերիդ»ներ, որոնք շարժուն սերմային մարմիկներ—սպերմատոզօֆիդներ են պատրաստում:

Ապա նրանք ունին նաև իգական սեռական գործարաններ, «արիսեգոննեաներ», որոնց մէջ ձուիկային վանդակներ են առաջանում:

Սպերմատոզօֆիդը թափանցում է ձուի մէջ, միանում է նրա հետ, բերմնաւորում է նրան:

Այն ժամանակ ձուն սկսում է զարգանալ և կազմում է սաղմ, որից բուսնում է մարմնակազմը, որ ընդհանուր կերպով նման է լինում մօրը:

Բարձր կարգի, ծաղկաբեր կոչուած բոյսերի սեռական գործարանները գտնուում են ծաղիկների մէջ—իգական սեռական գործարանները, պազարանները, պարունակում են ձուիկներ կամ սերմակո-

կոններ, իսկ արական սեռական գործարանները, առեջքը, պատրաստում են ծաղկափոշի:

Ծաղկափոշին բեղմնաւորում է սերմնակոկոնը, որից այնուհետեւ զարգանում ու առաջանում են սերմերը:

Կան բոյսերը, որոնք երկսեռ են. այդպիսիների ծաղիկները իրենց մէջ թէ պազարան ունին և թէ առեջք:

Թէ որ դրանք—պազարանն ու առեջքը, միաժամանակ են զարդանում, այն ժամանակ առաջանում է ինքնաբեղմնաւորումն, այսինքն՝ միենոյն ծաղկի ծաղկափոշին ընկնում է նրա պազարանի մէջ:

Բայց եթէ այսպիսի ծաղկի արական և իգական սեռական գործարանների հիւթերը ոչ թէ միաժամանակ են հասնում, հապա տարբեր-տարբեր ժամանակ, այն ժամանակ կատարուում է փոխաբերական բեղմնաւորումն, այսինքն՝ մի ծաղկի սերմնակոկների ծաղկափոշին բեղմնաւորում է նոյն տեսակի պատկանող մի այլ բոյսի: Դա կատարուում է բամու կամ միշաների միջոցով:

Միշատները միշտ փնտրելով թռչում են մի ծաղկից միւսը և այդ միշոյցին նրանց մարմնին կպած ծաղկափոշին ընկնում է միւս ծաղկի պազարանի մէջ:

Խօսենք մի քիչ էլ մեղուների մասին, որոնց մէջ սեռական բազմացման հետ տեսնում ենք նաև անսեռ բազմացումն:



Այդ նշանակում է, որ էպ ճայռագիրը երկու բազմացումն առաջանաւ է 1922 թվականի 11 հունվարի 7-ին:

տեսակ ձու են ածում, զրանցից ոմանք զարգանում են առանց արական սերմի մասնակցութեան, իսկ ոմանք էլ պէտք է անպատճառ բեղմնաւորուին, որպէս զի զարգանան:

Չուերի առանց բեղմնաւորութեան զարգանալը կոչում է կուսական բեղմնաւորումն (յղութիւն), «պարտենոդենէդ»:

Մեղուների խմբի մէջ լինում են արու մեղուներ, մանրիկ անպառուղ էդ մեղուներ՝ կարճ փորիկով, ուղիղ խալթոցով և սեռական սաղմային դրութեան մէջ գանուող գործարաններով, զրանք կոչում են բանուոր կամ մշակ մեղու, և վերջապէս մի արգասաւորող էդ մեղու, մայր մեղու կամ թագուհի, որ ունի խոշոր փորիկ, կեռացած խալթոց և զարգացած ձուիկներ:

Մայր մեղուն իւր կեանքի մէջ մի անդամ միան գուրս է դալիս փեթակից ու «հարսանեկան թոփչը» գործում, որի միշոցին լղիանում է արու մեղուներից մէկից:

Այդ ժամանակ արուի սերմը լցւում է, այսպէս ասած, սերմապարկի մէջ, որ գանում է թագուհու արգանդի մէջ:

Սրուի և էզի այս միացումը, երբ մէկի սերմը թափւում է միւսի մէջ, կենդանիների վերաբերմամբ կոչւում է միաւորութիւն կամ կցուիլ և այդ գործողութիւնը կատարելու համար կենդանիներն ունին արտաքին սեռական գործարաններ:

Իսկ ներքին սեռական գործարանները, այսինքն էդերի ձուարանները և արուներն իրենց սերմով բեղմնաւորում են ձուանցքի մէջ, ապա շրջա-

(ամործիքը), ինչպէս ասացինք, պատրաստում էն ձուարանները՝ ձու, իսկ ամործիքը՝ սերմ:

Էդ կենդանիները, այսինքն նրանք, որ բեղմնաւորուած ձուն մինչեւ նրա կատարեալ զարգացումը իրենց ներսն են պահում, ձուն պահելու համար ունին մկանացին մի պարկ, որ կոչւում է արգանդ:

Ինչպէս յատնի է, մարդկային սաղմը արգանդի մէջ ամբողջ ինն ամիս է մնում:

Բայց մենք գարծեալ մեղուներին դառնանք:

Մայր մեղուն կամ թագուհին սերմի մեծ պաշարով վերաբառնում է փեթակ և մօտաւորապէս 48 ժամ անցնելուց յետոյ, սկսում է ամբողջ ձըմեռուայ ընթացքում, մինչեւ մեռնելը, ձու ածել:

Մի մայրը 40—70 հազար ձու է ածում:

Ամեն մի ձուն նա զետեղում է առանձին բըշիչների մէջ, սերմնապարկից թափում է փոքր ինչ սերմ:

Թէպէտ նա սերմը արուից է ստացել, բայց ինքն է իրեն բեղմնաւորում: Բեղմնաւորուած ձուերից գուրս են գալիս անսեռ բանուորներ:

Մանր բըշիչների մէջ զրած ձուերը նա չի բեղմնաւորում. գրանցից արու մեղուներ են գուրս գալիս:

Զկներից շատերը իրենց ձուերը խաւեարի ձեւով ածում են ջրի մէջ և արուներն իրենց սերմով բեղմնաւորում են այդ ձուերը:

Թէոչունները ածում են ձու, որ արուների սերմով բեղմնաւորում են ձուանցքի մէջ, ապա շրջա-

պատւում են սպիտակուցով. թռչունը ծուն աժելուց յետոյ թուխս է նստում:

Կաթնասունները բոլորն էլ, դրանց մէջ նաև մարդս, զանազանասեռ են:

Արուի սերմով բեղմնաւորուած էջի ծուն իւր կատարեալ զարգացման հասնում է արգանդի մէջ և ձագը կենդանի է ճնում:

Կաթնասունի ծուարանում պատրաստուած ծուն շատ մանրիկ բան է լինում. դա կազմուած է մի բարակ թաղանթից, որ լցուած է լինում սպիտակուցով հարուստ հատիկաւոր հիւթով. այդ գեղնույն է:

Դեղնուցի ներսը կայ մի խոշոր պայծառ փամփշիկ, որ սաղմացին փամփշտիկ է կոչւում, նրա մէջ նկատւում է մի կէտ, սաղմացին բիծը:

Ահա ձեզ ապագայ մարդք:

Իւրաքանչիւր ծու գտնւում է առանձին բըշիչ մէջ, որ գնդասեղի պլիսի մեծութիւն ունի. այդ բըշը կոչւում է զրաաֆեան բչիչ, որովհետեւ առաջին անգամ Գրաաֆն է գտել այդ:

Որպէս զի ծուն ազտուի ու ծուարանից դուրս գալ, պէտք է որ զրաաֆեան բչիչը պատառուի:

Գրաաֆեան առաջին բչիչի պատուելը նշան է, թէ էզր սեռական հասունութեան է հասել:

Ինչ բան է արուի ծուն:

Սերմը պատրաստողը արուի սեռական մսանները կամ գեղձերն են. դա մի սպիտակաւուն մածուցիկ հիւթ է, որի մէջ մեծ քանակութեամբ լող

են տալիս սերմացին մարմնիկներ կամ սերմացին թելիկներ, «սպերմատոզօֆիդներ»:

Այդ թելիկները սաստիկ շարժուն են և մրտրակի նման դալարուն շարժումներ են զործում:

Երբ որ բեղմնաւորուելու ընդունակ սերմեր են կազմւում, այդ նշան է արուի կամ տղամարդի սեռական հասունութեան կամ արբունքին:

Իսկապէս բեղմնաւորողը սերմացին թելերն են, որոնք պատւակաւոր շարժումներով մտնում են ձուի թաղանթի վերայ գտնուած ու խոշորացոյցով միայն նկատելի ծակոտիներից ներս:

Ահաւասիկ այսպիսի նշանաւոր փոփոխութիւններ են առաջանում մարդուս մարմնի մէջ, երբ որ նու սեռական հասունութեան կամ արբունքին է հասնում:

Ե

Վերեում ասացինք, որ մարդկացին ցեղը պահպանւում է բազմանալով, որ բազմանալու ընդունակ են արբունք առած տղամարդիկ ու կանալք: Ի՞նչ բան է տղամարդու արբունքը:

Վերեում ասածից պարզ է, որ տղամարդն ունի մի գործարան, որ կոչւում է սերմի գեղձ կամ ծու, ամործիք, և որ այդ գործարանը պատրաստում է սերմ, որի մէջ լող են տալիս սպերմազօֆիդի բազմաթիւ թելիկներ:

Երբ որ տղամարդու սերմի մէջ առաջ են գալիս սպերմազօֆիդներ, այն ժամանակ նա սեռական

հասունութեան կամ արբունքի է հասնում, այսինքն՝ ընդունակ է գառնում բեղմնաւորելու և այդ լինում է 14—18 տարեկան հասակում:

Ի՞նչ բան է կնոջ արբունքը:

Սրդէն ասացինք, որ կնոջ ծուարանի մէջ կան զնտասեղի զլիսի մեծութեամբ բջիչներ, որ Գրաաֆեան են կոչւում. ամեն մի բջիչի մէջ մի ծու է դժնւում:

Երբ որ ծուն հասունանում է, Գրաաֆեան բջիջը պատռում է և արձսկուած ծուն ծուափողի միջով առաջ է խաղում դէպի արգանդը:

Եթէ ծուն իւր հանապարհին հանդիպի սպերմազօիդի, այն ժամանակ սպերմազօիդը կմտնի նրա մէջ և նրան կրեղմնաւորէ:

Դրանից ծուն կսկսի զարգանալ արգանդի մէջ և ինն ամսուայ մէջ կդառնալ մի կատարեալ երեխայ, որը յետոյ աշխարհը է զալիս որպէս ինքնուրոյն կեանք վարելու ընդունակ էակ:

Ամեն ամիս երբեմն այս, երբեմն այն ծուարանի մէջ զարգանում է մէկ հատ ծու, իսկ քիչ անգամ նաև երկու հատ ծու. իսկ շների և կատուների ծուարաններում զարգանում է մինչև անգամ տասը հատ ծու:

Զարմանալի է, որ ամեն անդամ, որ Գրաաֆեան բջիչը պատռուելով դուրս է զալիս ծուն, արիւնը առատութեամբ լորձանք է տալիս դէպի սեռական դորժարանները:

Արգանդի արտաքին արիւնատար անօթները, արիւնով խիստ լցուելուց, տրաքւում են: Դրանից

առաջանում է արիւնահոսութիւնը—ամսականք, դաշտանը:

Հետեւաբար դաշտանը, որ կրկնում է ամեն մի 28—30 օրը մի անգամ, նշան է, թէ արգանդի մէջ ընկած է հասուն ծու, որն ընդունակ է բեղմնաւորուելու:

Դաշտանը նշան է, թէ կինը արբունքն առել է:

Մանը կենդանիները, ինչպէս ճագարը, ծովալին խոզուկները, առնէտը, նմանապէս նաև թռչունները առնական հասունութեան են զալիս հէնց առաջին տարին. շունը, կատուն, ոչխարը, խոզը երկրորդ տարին, ծին, կովը—երրորդ տարին և այն:

Կինը սովորաբար տղամարդից երկու—երեք տարի առաջ է արբունքի հասնում. իսկ կինը արբունքի հասնում է մօտաւորապէս 12-ից մինչեւ 21 տարեկանի մէջերը:

Այդ բանի վերայ ներգործութիւն ունի նախ և առաջ երկրի տաք եղանակը, որից արագանում է բոյսի անելութիւնը, փութով բացւում են ծաղկեները և շուտով հասնում պառւղները. դա նպաստում է նաև, որ երկու սեռի մէջ էլ սեռական գործունեութիւնը կանուխ է զարթնում, ընդհանրապէս կենդանիների մէջ, իսկ մասնաւորապէս մարդու մէջ:

Ընդհակառակն՝ բանի հիւսիս գնանք, այնքան ուշ է հասնում արբունքը:

Շուեղիայում, Դանայում և հիւսիսային Գերմանիայում աղջիկները 16—17 տարեկան հասա-

կումն են արբունքի հասնում, ընդհակառակն, Փոքր-Ասիայում, Արաբիայում, Եղիպտոսում, Հարեշտա-նում 8—10 տարեկան միջոցին նրանց դաշտանն է սկսում, իսկ շատ անգամ ինը տարեկան հասա-կում մայր են դառնում:

Պէտք է նկատել, որ մի քանի դէպքում (այդ մասին յետոյ կխօսենք), միայն սեռական ծգտումն է զարթնում, ցանկութիւն է ծնւում, բայց դեռ սեռական իսկական ոյժ չկայ, գեռ ևս բեղմնաւո-րելու ընդունակութիւնը հասունացած չէ:

Առհասարակ առողջապահիկ պայմաններն ու շրջապատող հանգամանքները նկատելի ներգործու-թիւն ունին արբունքի հասնելու ընթացքի վերաբ-ամեն մի արհեստական զրդիռ կարող է արագաց-նել սեռային զգացմունքի զարթեցումն:

Պարիզից և ուրիշ մեծ քաղաքներից շատ էլ հեռու չգտնուող զիւղերում, աղջիկները մի տարի աւելի ուշ են արբունքի հասնում, քան թէ քա-ղաքների նեխած կեանքի մէջ:

Վերջապէս վատ սնունդը արգելք լինելով ամ-բողջ մարմնակազմի զարգացման դանդաղում է նաև արբունքը:

Զ

Արբունքը հասնելու միջոցին մարդուս ամբողջ կազմուածքի մէջ մի շարք նշանաւոր փոփոխու-թիւններ են առաջանում՝ սկսած սեռական դորժա-րաններից մինչև իսկը նույն ու բնաւորութիւնը:

Յեղափոխութիւնը սկսում է 14 տարեկան միջոցից և աւարտում է 24-ի մօտերքը:

Կղակի և մարմնի միւս մասերում դուրս են գալիս մազեր և խիստ աչքի է ընկնում ձայնի փո-փոխութիւնը:

Համարեա բոլոր կենդանիների մէջ ևս ծայնը մեծ դեր է խաղում սիրոյ շրջանում, և արուներն աշխատում են իրարից լաւ երգել, որպէսզի էգերի ուշադրութիւնը զրաւեն:

Կանանց կոկորդը երկարում է և ծայնը աւելի բարձր է լինում. սովորաբար տղամարդու կոկորդի առջևի մասն է զարգանում և ծայնը, այսպէս ա-սած, ցածանում է:

Կինը սկսում է գլխաւորապէս կրծքի վերեի մասով շունչ քաշել, իսկ տղամարդը—աւելի փո-րով:

Մինչև անգամ ոսկրներն էլ են փոխում— կնոշ կոնքը դէպի լայնքն է գնում, առհասարակ տղամարդկանց ոսկրներն աւելի դէպի երկանքին են քաշում. ընդհանրապէս կմախքը խոշորանում է, որից և երկու սեռի էլ մարմնի մեջ աւելի վայե-լուչ կազմ է ստանում:

Ընդհանրապէս կանանց 13 տարեկան միջոցնե-րին և տղամարդկանց 15 տարեկան միջոցներին մարմնի աճումը, կշիռն ու կրծքի լայնութիւնը զարմանալի կերպով աւելանում են և այն էլ մի այնպիսի արագութեամբ, որ ուրիշ ոչ մի հասա-կում այնպէս չէ լինում. մեքենան իւր բոլոր զօրութեամբ դորժում է: Միևնուն ժամանակ էլ

նկատելի է դառնում, որ հոտառութիւնը սրբում է:

Պարզ է, որ դրսից գործուած ամեն մի արդյունք կամ ճնշումն կարող են հոգու և մարմնի համար անդառնալի վնաս պատճառել, պարզ է նմանապէս, թէ թնչպիսի վնաս է հասցնում մարմնակաղմին օնանականութիւնը: Զգոյշ եղէք:

Ծղամարդու և կնոջ մտաւոր կազմը մանկան հասակում այնքան էլ խիստ կերպով չեն տարբերւում իրարուց, ինչպէս յետոյ:

Աղջիկը աւելի հասկացող է լինում ու սուր. նա աղից արադ է և միեւնոյն ժամանակ հեղ, խօսք մորիկ անող, մինչդեռ տղան առոյդ է, յանդուզն և յամառ:

Առ հասարակ մանկական հասակն աւելի անհոգ է լինում. նրա պարզ և բաց սիրտն մեծ յօժարութեամբ ենթարկւում է ձնողների հեղինակութեան:

Մռայլ տրամադրութիւնը վաղանցուկ է և զօրեղ չի լինում: Բայց ահա դալիս է արբունքը:

Առաջուայ բոլոր խաղաղ, պարզ, անվրդով կեանքը տակն ու վերայ է լինում: Ամբողջ աշխարհը պատանու կամ դեռահաս աղջկայ համար բոլորովին ուրիշ տեսակ է երեսում, բոլորովին փոխւում է:

Եւ ահա՝ աղջկայ շարժումներն աւելի նազուկ են դառնում, ինքն իրեն աւելի զսպած է պահում, դառնում է ամօթխած, շատ անդամ վրան անառիթ թախիծ է գալիս, յաճախ հառաջում է, մէջը ծրնւում են ցանկութիւններ, որոնք անծանօթ են

իրեն, նա ձգտում է առանձնանալ և մտածում է վանք քաշուելու ձասին:

Սակայն այս աւելի ու աւելի աճող կրօնական զգացմունքի հետ միաժամանակ կամաց-կամաց ոյժ է ստանում հանելի դառնալու ցանկութիւնը, որի հետ կապուած են զգեստի, արդ ու զարդի և այլն հոգսերը:

Սկզբում չհասկանալով հոգեկան այս յեղափոխութեան խսկական պատճառը, նրա զէսպի ընկերուհիները տածած վառ սէրը անցնում է բարեկամութեան և ընկերութեան սահմաններից և նման է լինում կրքի:

Նոյնքան նշանաւոր փոփոխութիւններ կատարւում են նաև պատանու հոգեկան կազմութեան մէջ՝ նրա մէջ ամեն ինչ ալեկոծւում է և խռովւում:

Ամեն մի աշխատանք նրան տաղտկալի է թուում, յոդնեցնող, աղատութեան ամեն մի սահմանափակում—անտանելի:

Այս անցողական տարիքի բնորոշ յատկութիւնն է—որ պատանիները սիրում են դասարկապորտութիւն, իրար մօտ խմբուել, արտակարգ բաներ անել, արկածներ, օդային ամրոցներ կաղմել:

Սիստեմատիկ աշխատանքը յոդնեցնում է պատանուն, ուստի և յօժարութեամբ փոխում է իւր պարապմունքները:

Պատանին սաստիկ զգայուն է գէպի ամեն բան՝ վիշտը, ուրախութիւնը, անյաշողութիւնները սաստիկ ներգործում են նրա վերայ. միեւնոյն

Ժամանակ նրա մէջ զօրանում է իւր «ես»-ի դիտակցութիւնը, դրա հետ նաև որևէ բանի հնագանդելու դէմ զայրոյթ:

Բաղմաթիւ նոր զգացողութիւններ նրա մէջ չափազանցացրած հասկացողութիւն են կաղմում իւր ոչի մասին, բազմաթիւ նոր մտքեր ծնունդ են առնում նրա զլիսի մէջ, զրանց թւում է նաև շատ վերացական նախազծեր, որոնք յետոյ իրենք իրենց խորտակում են, երբ հանդիպում են իրականութեան:

Այդ պատանին սկզբում կանանց վրայ փոքր ինչ վերելից է նայում, որպէս թոյլ սեռի վերայ. սակայն կանանց մօտ նա շփոթւում է և չէ կարողանում այդ շփոթութեան պատճառը հասկանալ:

Ամենահանդարտ և հեղ պատանին անդամ այդ միջոցին անզուսապ է դառնում, անկախութեան և ազատութեան սիրահար. նա հեռանում է ամենքից, ովքեր որ նրան ճնշում են, մինչդեռ իւր հասակակիցների մէջ ամենայն յօժարութեամբ անձնատուր է լինում իւր ամենայն ազատութեամբ գործելու և խօսելու հոգեկան կարիքին:

Ամենաչնչին կշտամբանքն անդամ զօրեղ ցատումն է պատճառում նրան, մինչդեռ հէնց այդ միջոցին է որ նա ամենից աւելի կարիք ունի առաջնորդի, որ միանդամայն աննկատելի լինի նրան:

Աշակերտական հասակի տղերանց վրայ եղած դիտողութիւններից երեսում է, որ ամենից աւելի

վատ վարք ունեցողներն են նախ՝ 13—14 տարեկան տղաներն, այն դէպքում, երբ նրանց սեռական զգացմունքն զարգացած է կանխաժամ, իսկ երկրորդ 15—17 տարեկանները, որոնց արբունքի հասունութիւնը որևէ պատճառով դանդաղել է:

Ոլսպիսով՝ սեռական զարգացման ընթացքի ամեն մի խոտորումն վնասակար հետեանք է ունենում վարքի վերայ:

Իսկ այդ խոտորումը մեծ մասամբ կախուած է նուազ կամ խիստ առատ սննդառութիւնից, ընդհանրապէս առողջապահիկ անբարեխաչող հանդամանքներից, մարմնական յոզնածութիւնից, որ առաջ է գալիս մտաւոր երկարատև լարուած աշխատելուց:

Թէ տանը և թէ ուսումնարանում պէտք է ուշագրութեան առնուին այս ամենը. ապա թէ ոչ աւելի ևս շփոթութիւն կծդէք պատանիների հոգու մէջ երբէք չմոռանաք այս բանը...

Աղջիկների վերաբերմամբ համարեա բոլոր ուսումնարանական դաստիարակչուհիները միաբերան վկայում են, որ ամենից գժուարը 14—16 տարեկան դեռատի աղջկերանց կառավարելն է:

Կատարեալ փոքրիկ «գեեր» են դրանք, որ ամեն մի չնչին պատճառից կրակի պէս բռնկւում են և նոյն իսկ սուրբին կարող են համբերութիւնից հանել:

Դրանց ընորոշ յատկութիւնը, ինչպէս նկատելի են շատ դպրոցներում, այն է, որ ձգառում են հրապուրիչ լինել, որը կոկետութիւն է կոչում:

թէ բնութիւնը և թէ զրա հիման վրայ առաջած հասարակական կեանքի պայմանները կնոշն, առես թէ, չէզոք գեր են տուել սեռալին ընտրութեան մէջ:

Այդ պատճառով էլ բնազգմամբ նա ծգտում է աչքի ընկնել, իւր զրայ ուշադրութիւն զրաւել:

Եւ այդ նպատակով էլ նա օգուտ է քաղում այն բոլոր միջոցներից, որ իւր ոյժն են կազմում. օրինակ՝ զեղեցկութեամբ, զուքսի արտասովոր տարագով ու արդ ու զարդի հոխութեամբ, քայլուածքի և շարժուածքի վայելչութեամբ, աչքերի արտայալութեամբ, խելառ վարձունքով և այլն:

Գիտութեան շնորհիւ, ճշգրիտ հետազոտութիւններից երկան է եկել, որ ամենավատ վարք աղջիկներն արտայալակել են դաշտանի միջոցին:

Բայց հէնց որ փոթորիկն անցնում է և աղջիկներն ընտելանում են արդէն իրենց մէջ կատարուած փոփոխութիւններին, նրանց վարքը սկսում է գնալով լաւանալ:

Դժբաղգաբար այս ամենը դպրոցական կեանքի տաք միջոցին է լինում:

Սոօրեայ կեանքի ինչին է բնութիւնը:

Ծնողները և մասսամբ մանկավարժները այսպիսի փոփոխութիւններից անհանդիստ եղած, առաջած և աշակերտաղների անյառաշաղիմութիւնից աժգո՞հ, զօր են անում և նրանց ստիպում են ուժքանեցնել:

Այսպիսի միջոցին ուժքնութիւն բանեցնել, մինչդեռ հէնց այդ միջոցին է, որ պէտք չէ ուժ-

գնութիւն գործ ածել, նշանակում է, որ ծնողները չեն հասկանում իրենց զաւակների բնութիւնը:

Եւ որովհետեւ կարելի չէ անպատճ կերպով բնութեան դէմ գնալ, ուստի և այդպիսի զօրով առաջ տարուած պատանիները դառնում նուազարիւն, թոքախտաւոր, նեարդու և նոյն իսկ թուլամիտ:

Այն երեխան, որ համարեա թէ հանճար դառնալու առհատչեայ ուներ և, զոնէ, անսովոր ընդունակութիւններ էր ցոյց տալիս, 17 տարեկանից յետոյ յետին կարգն է անցնում:

Միալն այդ միջոցներն են սկսում մարմնակաղմը ֆիզիքապէս և մտաւորապէս կատարելազործուել:

Նախընթաց շրջանի յուգումը իշնում է, բնաւորութիւնը խաղաղում է, ամրանում, հաստատում, պատանին որոշ կերպարանք է ստանում:

Նոր լարեր հնչեցին, նոր յոյզեր շարժուեցան նրա մէջ. տաղանդի և հանճարի առաջին նշոյներն աշխատում են ուժդին գուրս գալ լոյս աշխարհ:

Ով որ այդ հասակում անդորքունեայ և ծոյլ է եղել, նա և իւր ամբողջ կեանքի մէջ այդպէս էլ կմնայ:

Բոլոր մեծ մարդիկ իրենց մեծութեան նշանը կեանքի այդ լուսաւոր, եռանդուն շրջանումն էն արտայալակել:

Գալիլէյր 20 տարեկան միջոցին մարդկութեանը տուաւ ճօնանակի միջոցով ժամանակը չափելու եղանակը:

Անկախութեան զգացմունքի և անձնական կատարելագործութեան զիտակյութեանը հետ միասին աճում է նաև իւր անձը մէկի կամ զաղափարի համար զոհելու ընդունակութիւնը:

Այդ գեղեցիկ տարիքում մարդիկ սիրով և առանց երկար մատելու զոհուում են ուրիշների բարօրութեան համար...

Բայց ամենից աւելի զարգանում է դէպի միւս սեռն ունեցած հակումը, որ կոչւում է սեռական զգացմունք կամ սեռական ծգառումն:

Սեռական զգացմունքը—մարդու կեանքի բոլոր կողմերումն էլ ամենազօրեղ շարժիչն է:

Այն զգացմունքը, որ բոլոր ամենավեհ բաների հիմունքն է կազմում, պէտք է աղնուացնել, ոչ թէ սպանել կամ այլանդակել:

Իսկ սէրը, աստուածալին կայծը, աղնուացնում է այդ զգացմունքը, այդ հակումը, որով և մարդն տարբերում է կենդանիներից. իսկ մարդկալին օրէնքները ամուսնական կապ են հաստատել:

Ե

Սեռական ծգուումը սովորական, կանոնաւոր պայմաններում ծնւում է հէնց արբունքի սկզբում, իսկ նրա վերջին՝ հասնում է իւր կատարեալ զարգացման:

Սեռական զգացմունքը արհեստական կերպով առաջանում է խիստ առատ սնունդից, նուրբ գրը-

գոիչ նիւթեր զործածելուց, ցոփ կեանքից, ոգելից խմիչքներից, ծխախոտ ծխելուց, ուրիշներին նմանելուց, վատընկերներից, ափեղ-ցփեղ վէպեր կարդալուց:

Ընտանի կենդանիները, շահի տեսակէտով, այսպէս ասած, դաստիարակւում են այնպիսի պայմանների մէջ, որ նրանց սեռական ծգտումը արհեստական եղանակով ժամանակից առաջ է զրգուում, և նրանք շուտ են սկսում արգասաւորուիլ:

Եւ ի՞նչ ենք տեսնում. տեսնում ենք, որ միայն հասունացած կենդանիներն են խոշոր սերունդ առաջնում. այնպէս որ վերջի վերջոյ ստիպուած եղան հրաժարուել մատաղ կենդանիներ զուգաւորելուց:

Այսպէս, օրինակ, նորվեգիայում կովերի ու ծիերի շատ ցեղեր այլասեռել, մանրահասակ կենդանի են դարձել այն պատճառով, որ կենդանիներին շատ փաղ էին զուգաւորում:

Իսկ ինչ կը վերաբերի մարդուն, պէտք է ասել, որ վայրենի ազգերը սեռական կեանքն շատ վաղ են սկսում, և դրա համար էլ, ինչպէս դիտել են, որքան վաղ են սկսում, այնքան էլ վաղ թառամում են: Քաղաքակրթուած ազգերն էլ միւնոյն եղրակացութեան հասան:

Սեռական ալգորիթմ վաղաժամ յարաբերութիւնից մանաւանդ աւելի վնասում է կինը. ապացուցուած է, որ զոյութեան կոուի համար ամենից աւելի ընդունակ և ամրակազմ երեխաները հասուն ծնողներից են առաջանում, այսինքն այնպիսի ծնողներից, որոնց տարիքը 24-ից պակաս և 40-ից մեր չէ:

Այսովով ուրեմն բնութիւնը ինքն է թելազում ժուժկալել մինչեւ արբունքի հասնելը։ Մինչն են ասում աշխարհիս բոլոր երկրների ամենալաւ բժշկները։

Զկալ մի ցաւ, որ մաքուր, անարատ կենցաղավարութիւնից առաջացած լինի։

Ժուժկալութիւնը անվնաս է...

Մինչեւ անգամ հաստակաւոր-պսակուած մարդիկ էլ կարող են ինչքան ասես ժուժկալել։ Բայց մեզանում ժուժկալութիւն ասած բանը դրանց համար չէ, մանաւանդ դրադէմ մեղանչում են ի միջի այլոց վաճառականները, որոնք զանազան տօնավաճառանոցներում տեսակ-տեսակ վեներական ախտերով ու ու սիֆիլիսով վարակուած՝ վերադառնում են տուն և որպէս նուէր, այդ ծանր, սպանիչ հիւանդութիւնները մտցնում են ընտանիքի մէջ։ *)

Մինչդեռ ժուժկալութիւնից ոչինչ վնաս չկալ. կատարեալ ժուժկալութիւնն ու անարատ կեանըը երբէք չեն խանգարում ոչ փիզիական և ոչ բարոյական օրէնքները։

Սեռական մկանները պահպանում են իրենց ոչիրանկախ այն հանգամանքից, թէ դործում են դրանք, թէ ոչ, և ժուժկալութիւնից երբէք չեն նուազում։

Արբունքը հասնելուց մինչեւ ծերանալը ամործիքները, որոշեալ տարիքում, չեն դադարում սերմ պատրաստելուց և դրա համար կարիք չունեն արտաքին դրդիչի։

*) Տես իմ «Խնչ է ժուժկալութիւնը» գրքոյկը։

Եւ նրանք, որ հակամէտ են մաքրութեան ու ողջախոհութեան, ամենեին չպէտք է երկիւղ կը են, թէ կը կորցնեն արգասաւորելու բնդունակութիւնը և կը վնասեն իրենց առողջութիւնը, որը ամենեւին կախում չունի սեռական բնագդից։

Մարդուս ուղեղը չի քնած. նա շարունակ զարգանում է անդանդաղ և սարսափելի ոյժ ունի մեր բոլոր գործերն ու զգացմունքները կանգնեցնելու և զօրեղ կերպով կառավարելու համար։

Մենք ևս շատ առաջ ենք զնացել մեր գաղանակերպ նախնիքներից. մենք այժմ կարող ենք ազնուացնել մեր բնազները. մեր սէրը մինչեւ իսկ կարող է, գուցէ, բոլորովին հրաժարուել բնագդից—նրանից բարձր մնալ։

Մենք բնդունակ ենք ուրիշների երշանկութեան համար զոհ բերել մեր անձը. կարող ենք կանոնաւորել նաև մեր սեռական զգացմունքը։

Թէ որ տղամարդիկ ողջախոհ մնան (այդ կողմից կանալը հազար անգամ ազնիւ ու մաքուր են տղամարդկանցից) զոնէ մինչեւ արբունքի հասնելը, դրա հերեւանքը ոչ միայն այն կը լինի, որ կինայուի և կամբարուի սեռական ոյժը, հապա նաև ֆիզիքական ու բարոյական ոյժն ընդհանրապէս։

Գեռ հնումն յայտնի էր, որ փակեանները (ըմբիշները) ուժով լինելու համար հրաժարում էին, այսպէս ասած, սիրոյ վայելքներից, իսկ զինուորները պատերազմի պատրաստուելիս ժուժկալ էին մնում։

Գիտութիւնն էլ, կրօնն էլ միահաւան պնդում են ու հաստատում, որ ողջախոհութիւնը պէտք է

ամեն մի անհատի համար ամենաբարձր իդէալը
լինի:

Տեսէք, արբեցութիւնը չնջում է մարդկու-
թեան $27^0/0$ -ը, իսկ սիֆիլիսը $20^0/0$ աւելի կամ
պակաս:

Ողջախոհութեան դէմ մեղանչելը, սիֆիլիսնու
արբեցողութիւնը համերաշխ, ծեռք-ծեռքի տուած
գնում են առաջ—և սրանք մարդկութեան ամե-
նազլիսաւոր պատուհասներն են:

Սակայն պէտք չէ յուսահատուել, քանի որ կա-
նոնաւոր դաստիարակութիւնն ու բոլոր սերունդ-
ների համերաշխ չանքերը, հայրերի ու զաւակների
հոգեկան միութիւնը կնպաստեն մեղ զիմաղրելու-
ամենայն տեսակ հրապուրների ու զայժմակղու-
թիւնների:

Եւ այդ իդէալին հասնելու համար մենք պէտք
է ճանաչենք կեանքի շատ մռայլ կողմերը, ուղիղ
նայենք սեռական անկանոն գործողութիւնից յա-
ռաջ եկած այլանդակութիւնների վերայ:

Ինչքան երկու սեռի պատանիներն էլ աւելի հաս-
կացողութիւն ունենան սեռական գործողութիւն-
ների կութեան մասին, այլև այն վտանգների մա-
սին, որ սպասում է նրանց, այնքան էլ առողջ
ու երշանիկ մարդկանց թիւը կաւելանալ երկրիս
վրայ:

Բողջախոհութիւնից, բնութիւնն ի չար գործ
գնելուց, ժողովրդին այլասեռումից պահպանելու
ամենալաւ միշոյն այն է, որ պատանիները զիտակ
լինեն սեռական գործարանների պաշտօնին:

Ազգերը փորձով ծանօթացել են սեռական կեան-
քի էութեան և դրան ի չար գործ գնելուց առա-
ջացած հիւանդութիւնների հետ:

Ամեն մի անհատ հնարաւորութիւն ունէր հե-
տեւել բնութեան օրէնքներին և խոշոր ու առողջ
սերունդ առաջացնել:

Մէր պատանիները խարխափում են մառա-
խուղի մէջ՝ անօգուտ տեղը վատնելով ահազին ոյժ,
խելք մաշելով այնպիսի խնդիրների վերայ, որոնք
գեռ նրանց ուժից վեր են:

Եւ մինչ սպասում ենք, որ այդ մառախուղը
փարատուի, կրկնում ենք, մարդկութեան ամենամեծ
պատուհասները,—օնանականութիւնը, սիֆիլիսն
ու անառակութիւնը—շարունակում են անխնայ
կերպով կոտորած անել նրանց մէջ, որոնք կոչուած
են ապահովել առողջ մարդկութեան ամելութիւնը:

Եւ մինչ հայրենիքը կենսական պահանջ ունի
մարմնով զօրեղ և ոգով եռանդուն մարդկանց, հրա-
պարակ են զալիս խանգարուած նեարդերով հիւ-
ծուած սերունդներ, որոնց մէջ քանի գնում աւելի ու
աւելի հանդիպում ենք ծեր երիտասարդների:

Հ

Մէր կեանքի բազմաթիւ ցաւերի ու պատու-
հասների մէջ կայ մի երկոյթ, որ որդի նման կըր-
ծում է մարդկութեան ծաղիկը, հիմքից խորտակում
հաղարաւոր տաղանդներ, չորացնում է կեանքն ու
առողջութիւնը:

Այդ չարիքի անունը — օնանականութիւն է:

Օնանականութիւն կոչւում է այն, որ մարդ, տղամարդ կամ կին, իւր երեակալութեան մէջ պատկերացնում է այն հաճոյքը, որ կապուած է սեռային կեանքի հետ, և ձեռքով կամ մի այլ միջոցով սկսում է զրգուել սեռական գործարանները այնքան, որ ստանայ սեռային կանոնաւոր գործողութեամբ պատճառած զգացումը:

Աւանդութիւնն ասում է, որ այդ արատով պարապելիս է եղել Յուդայի որդի Օնանը. այդ տեղից էլ ծագել է օնանականութիւն անունը:

Եւ եթէ մարդիկ գիտենալին, թէ ի՞նչպիսի փիղիքական ու մտաւոր կործանումն է պատճառում մշտապէս սերմ կորցնելը, հաւանօրէն նրսնը մի քիչ մտքի մէջ կընկնէին:

Իսկ օնանականութիւնից ձեռք քաշել անհրաժեշտ է. ծնողներն ու դաստիարակները պարտաւոր են ամենայն միջոցով նպաստել այդ բանին:

Այդ արատը, այդ չարիքը, աւելի շատ է տարածուած քան թէ կարծւում է, մանաւանդ եթէ ի նկատի ունենանք, որ շատ դէպքեր անյախտ, ծածկուած են մնում:

Օնանականութիւնը խիստ տարածուած է զիշերօթիկ ուսումնարաններում. դժուար է այդ ուսումնարաններում օնանականութեամբ պարապողների թիւը ստուգել, բայց թէ նորաւարտների և թէ վաղուց աւարտողների պարզ խոստովանութիւններից, ինչպէս նաև սաների վերայ եղած խիստ

հսկողութիւնից երևում է, որ օնանականութեամբ պարապողների թիւը խիստ շատ է:

Կան բժիշներ, որոնք ընդունում են, թէ մարդ չկայ, որ երբեմն այդ արատով պարապելիս չինից բայց անբնական մարդիկ շատ:

Յայտնի է, որ օնանականութիւնը աւելի տարածուած է ունեած տան զաւակների, քան թէ չքաւորների մէջ:

Նմանապէս նկատուած է, որ օնանականութիւնն ըաղաքներում աւելի է, քան թէ զիւղերում. զիւղական մանուկների մէջ այդ բանը քիչ է պատահում:

Որքան երեխաները օնանականութիւնը վաղսկսած լինեն, և որքան յաճախ պարապած, այնքան աւելի վնասակար է դա:

Օնանականութեան հիմքը կազմում է նեարդային զրութեան (համակարգութեան) ցնցումը, որից և առաջանում է մարմնակաղմի զանազան գործողութիւնների խանգարումը:

Այդ ցնցումից նշանաւոր չափով թուլանում է նեարդային զրութիւնը և ամեն անդամ օնանականութիւնից յետոյ հոգու ճնշուած զրութիւն է առաջանում: Քանի աւել պարապեն օնանականութեամբ, այնքան էլ աւելի կը թուլանայ պարապողների նեարդային համակարգութիւնը:

Հիւթերի, իսկապէս սերմի կորուստը, ասում է պրոֆեսոր Տարանովսկին, Երկրորդական նշանակութիւն ունի. զրա ամենալաւ ապացուց են այն ցաւադար երկոյթները, որ ամենից աւելի օնանա-

կանութիւնից երեան են գալիս արբունքի չհասած
պատանիների, այսինքն նրանց վրայ, որոնց սեռա-
կան գործարանը ոչ հիւժ է արտազրում և ոչ սերմ:
Օնանականութեան, մանաւանդ երկարատե օնա-
նականութեան, այսինքն այն, որ մի քանի տարի
է տեսել և յաճախ կրկնուել, վնասակար հետեանք-
ները շատ մեծ են և աւելի պարզ կերպով արտա-
յալտուում են հոգեկան գրութեան վերայ. իսկ եթէ
կայ նախատրամադրութիւն, այն ժամանակ երեան
է գալիս մինչև անդամ հոգեկան հիւանդութիւն:

Վաղ մանկական հասակում կրած հիւանդու-
թիւնները, մանաւանդ ուղեղի և նրա թաղանթնե-
րի կրած հիւանդութիւններ, ֆիզիքական և մտա-
ւոր ոյժից վեր աշխատանքը, անբաւարար սնունդը,
ամեն տեսակ երկարատե դրկանքներն ու ու-
րիշ պատճառներ, որոնք ներգործում են ամրող
մարմնակազմի և մանաւանդ ուղեղի կանոնաւոր
զարգացման ու սննդառութեան վրայ, կարող են
վաղ մանկութիւնից սկսուած և մշտապէս շարու-
նակուած օնանականութեան հետ, մտաւոր խան-
դարմունք առաջ բերել:

Եթէ այդ պայմանները չլինին էլ, օնանականու-
թիւնը, ուրիշ նեարդային համակարգութիւնը թու-
լացնող ու հիւժող պատճառների նման, մարդուս
մարմինը հակամէտ է դարձնուած նեարդային ամեն
տեսակ ծանը հիւանդութիւնների և գլխի ու ող-
նաշարի ուղեղի կաթուածի, որ և իցէ կողմնակի
պատահական պատճառներից: *)

*) Տես իմ „Ուղեղի սիֆիլիս“ գրքուկը.

Մարմակազմի առողջութեան վերայ բացառա-
պէս օնանականութեան ունեցած աղղեցութիւնը
սովորաբար արտայայտում է նրանով, որ այդ արա-
տին անծնատուր եղողները լինում են ցրուած, թուլ
յիշողութեամբ, փոփոխական տրամադրութեան տէր,
հակամէտ առանձնութեան, գառնում են սաստիկ
ամազկոտ, վախկոտ և զուրկ ծեռներէցութեան, ան-
վեհերութեան ու քաշութեան այն ոգուց, որը զարթ-
նում է կանոնաւոր զարգացող պատանիների ա-
ռողջ մարմնակազմի մէջ,—ասում է պ. Տարնով-
սկին:

Սովորաբար օնանականութեան անծնատուր
եղողներն այն երեխաններն են, որոնք ժառանգաբար
ստացել են բաւական խանդարուած նեարդային
համակարգութիւն. մինչդեռ բոլորովին առողջ երե-
խանները շատ քիչ է պատահում, որ այդ ախտն ու-
նենան:

Եւ առողջ երեխաններին, որոնք պատահաբար
սկսել են օնանականութեամբ պարապել, դժուար չէ
այդ ախտից լետ կանգնեցնել:

Եւ այդպիսի առողջ երեխանների վերայ օնա-
նականութեան ներգործութիւնը արտայայտում
է մատաւոր գործունէութեան թուլութեամբ՝—սկսում
են լաւ չըմբռնել, դժուարութեամբ մի բան մրտք-
ները պահել, առաջանում է մտաւոր լոգնածու-
թիւն, կորչում է կեղրոնացած մտաւոր աշխա-
տանքի ընդունակութիւնը և այլն:

Առ հասարակ նեարդային համակարգութեան
Ճնշուած զրութիւնից առաջանում են նաև մի քա-

նի ուրիշ գործարանների խանդարմունք, օրինակ
խանդարւում է մարսողութիւնը:

Յաճախ, օնանականութեամբ պարապողը ախոր-
ժակ չէ ունենում, փորը կազ է լինում, ներսը
գաղեր են հաւաքւում, սրտի զդալի տակ ցաւ է
զգում, էրոյք ունենում. այդ ժամանակն է, որ նա
ապշեցնում է իւր շատակերութեամբ, բայց միւ-
նոյն ժամանակ քանի գնում աւելի ու աւելի լդա-
րում է, եթէ իւր ախտը յաճախ է կրկնում:

Օնանականութիւնից վնասուում են աչքերը,
թոքը և սիրտը. աչքի առաջ կայծի շարունակ
պայծառ կէտեր, շրջաններ կամ նման պատկերներ
են երեսում, և մանկական հասակից օնանականու-
թեամբ պարապող մարդկանց կրծքի վանդակը միշտ
վատակազմ է լինում, բացի այդ ամբողջ մարմնի
մկանները մեղկանում են, իրենց առաձգականու-
թիւնը կորցնում: Այդ պատճառով էլ օնանակա-
նութիւնը՝ խանդարելով բոլոր գործարանների ներ-
դաշնակ զարգացումը, միշտ վնասում է աճելու-
թեան:

Պարզ է, որ մարմնակազմը օնանականութիւ-
նից թուլացած, դիւրաւ ենթակայ է լինում զանա-
զան հիւանդութիւնների և դժուարութեամբ է դի-
մանում հիւանդութեան:

Ի՞նչքան հիւանդութիւններ, որ ինքն բոտ ինք-
եան աննշան բան են լինում, անբուժելի կամ դրժ-
ւար բուժելի են դառնում միմիայն այն պատճա-
ռով, որ մարմինը թուլացած է և ուժասպառ եղած
այդ արատից, այդ վատթար սովորութիւնից: Եւ

զեռ որբան հիւանդութիւններ յառաջ են դալիս
հէնց այդ սովորութիւնից:

Մարդիկ զեռ կատարեալ առնական հասակին
չհասած, ծաղիկ հասակում դառնում են զառամեալ.
և այդ այն պատճառով, որ հիւանդութիւնը առաջ
գնալով արգելք է լինում կազմի աճելուն, ոչնչաց-
նում է ովքը և, որպէս ուտող-ոչնչացնող ախտ,
կրծում, ոչնչացնում է ապագայ սերնդի սաղմբ:

Թ

Ինչպէս բանիցս ասուեցաւ, այս ախտը աղջիկ-
ների կազմուածքի վրայ էլ ոչ պակաս վնասակար
ներգործութիւն ունի:

Եթէ փոքր ի շատէ երկար տևելու լինի այն
ցաւագար սովորութիւնը, աղջկայ ֆիզիքական ընդ-
հանուր զրութիւնը նկատելի կերպով խանդարուում
է—նա գունատուում է, լզարում, նեարդային է
զառնում. այնուհետեւ սկսում են զլխացաւ, զա-
նազան նեարդային տկարութիւններ, մէջքը ցաւել,
իսկ հիւանդանալու խիստ հակամէտութիւն ունե-
նալու դէպքում, ենթարկում է նաև վերնոտու-
թեան (էպիլեպսիա), իստերիայի ևալին:

Ինչքան նորատի լինի աղջիկը, այնքան էլ
աւելի մեծ է լինում նաև նրա մարմնակազմի
մէջ օնանականութեան առաջացրած խանդարում-
ները:

Տղայք աւելի յաճախ են այդ ախտով պարա-
պում, քան թէ աղջիկները. օնանականութիւնից

աղջկերանց սեռական գործարանները կարմրում են, ուռչում և ցաւում են, այնպէս որ նրանք երբեմն ակամայ թողնում են իրանց չար սովորութիւնը: Իսկ մեծ աղջկները սովորաբար աւելի ամօթ, վախ և գիտակցութիւն են ունենում, քան թէ տղաները, ուստի և աւելի միջոցներ ունին ախտից ազատուելու համար:

Առ հասարակ նկատուած է, որ աղջկներն աւելի հեշտութեամբ են յետ կենում օնանականութիւնից, քան տղաները:

Կան միքանի նշաններ, որոնցով—ի հարկէ միան որոշ չափով—կարելի է հասկանալ օնանականութեամբ պարապածները:

Եթէ օնանականութեամբ պարապողը ինքը խոստովանուի իւր ախտը կամ նրան հետեւով հէնց գործողութեան ժամանակ բռնուի, այդ ժամանակ ախտի մասին կարելի է խօսել:

Քիչ է պատահում, որ ճնողները կամ «դաստիարակները» երեխանների վստահութիւնը գրաւած լինելով, կարողանան նրանց խոստովանեցնել իրենց յանցանքը:

Կան նաև ուրիշ շատ նշաններ, որ առաջ են բերում գրականութեան մէջ. ահա միքանիսր. դէմքը դժոյն է լինում և կորցնում է իւր թարմութիւնը, աչքերի տակը կապտում է. այս ամենը ի հարկէ, կարող է կասկած մնել, բայց միենոյն ժամանակ դրանք կարող են նաև որեւէ հիւանդութիւնից, վատ սննդառութիւնից էլ առաջացած լինել:

Այլ և, օնանականութեամբ պարապողների քայլուածքը կոպիտ, անձոռնի է լինում, և բոլոր շարժուածքները թոյլ, բայց այդ թուլութիւնը կարող է նաև ժառանգական լինել, ինչպէս նաև վատ սնունդից և ուրիշ պատճառներից:

Մանուկի սեռական անդամի չափից մեծ լինելը, այսինքն՝ իւր տարիքին անհամապատասխան լինելը, իսկ աղջկերանց հեշտոցի թացութիւնն ու սեռական գործարանի արտաքին շրմունքերի բորբոքուած լինելը—նոյնպէս նշան են:

Օնանականութեամբ պարապող երեխաններն աշխատում են ինչքան կարելի է ծեռքերը սեռական անդամների մօտիկ պահել և այնպիսի դիրք ստանալ, որ այդ անդամները շփուին:

Օնանականութեամբ պարապող երեխանները այն յափշտակուած են լինում այդ սովորութեամբ, որ նրանք իրենց ծեռքը ոչ միայն գիշերները՝ անկողնում, սեռական անդամների մօտ են պահում, այլ ցերեկը դաստիարանում նստած ժամանակները:

Օնանականութեամբ պարապողի հոգեկան դրութիւնն էլ ուրիշ է—թափիծ և ճնշուած դրութիւն. նա իւր հասակակիցների հետ խաղալուց բաւականութիւն չի ստանում. նրանց ընկերութիւնից խոյս է տալիս և աշխատում է առանձնանալ. շատ անդամ նա ամենելին չի հետաքրքրուում իւր չորս կողմը անցած-դարձածով, դառնում է անտարբեր, ժպտալիս դէմքի վերայ չի երեսում կենսուրախ, զուարթ արտայալտութիւնը, որ յատուկ է մանկութեան:

Մի քանի բժիշկներ մատնացոյց են անում, որ
13-14 տարեկան տղերանց սպիտակեղենի վրայ բժեր
են երեսում, ճակատներին բզուկներ են դուրս դալիս
և այլն:

Բայց այս նշաններն ել հաւաստի չեն, որովհե-
տեւ բժերը կարող են երազախաբութիւնից առաջա-
ցած լինել, իսկ բզուկները — ուղղակի կեղտից, ան-
մաքրութիւնից:

Երբ մի քանի այսպիսի նշաններ նկատուեն, ար-
դէն կարելի է ենթադրել, թէ ախտը գոյութիւն
ունի և այն ժամանակ կարելի է աւելի խիստ հրս-
կողութիւն նշանակել կասկածաւորի վրայ:

Բայց և այնպէս խորհուրդ ենք տալիս, որպէս
յանցանքի փաստեր՝ օգտուելու այն բժերից, որ լի-
նում են տղայի սպիտակեղենի վերայ. թէեւ պէտք
է զիտենալ, որ փոքր տղայք երազախաբութիւն
չեն ունենում:

Սխալի մէջ չընկնելու համար հարկաւոր է
սպիտակեղենը յանախ փոխել տալ, օրը երկու ան-
գամ, և եթէ դարձեալ բժեր երեան սպիտակեղենի
գամ, վերայ, որը մի ամբողջ օր դործ է ածուած եղել,
այդ արդէն ակնյախտնի նշան է օնանականու-
թեան, որովհետեւ կանոնաւոր երազախաբութիւ-
թեան, որդէն այդ չափ յանախ բժեր դոյանալ: *)

Սակայն պէտք է սպիտակեղենը բննելիս զդոյշ
լինել, որ երեխան չնկատէ և կասկածամիտ չը-
դառնալ:

*) Յես իմ «Մեր նեարդեր» գըքցիլ:

Բայց ամենահաստատուն միջոցը — եթէ միայն
աշողուի — այդ՝ օնանականութեամբ պարապողին
անկեղծ կերպով խոստովանել տալն է:

Երանի այն ծնողներին ու երեխաներին, որոնց
միջև փոխազարծ վսահութիւն կայ հաստատուած.
իւր զաւակների վստահութիւնը դրաւելը — դա մի
մեծ բազգաւորութիւն է նորահաս սերունդը զաս-
տիարակելիս: *)

Ճ

Օնանականութեամբ պարապելու պատճառ-
ները բաւական շատ են. սովորալար դրանով պարա-
պում են այն երեխաները, որոնք արդէն ժառան-
գաբար փոքր ինչ խանդարուած նեարդացին համա-
կարգութիւն են ստացած. իսկ բոլորովին առողջ
երեխաներ, ինչպէս վերել ասուեցաւ, քիչ է պա-
տահում, որ օնանականութեամբ պարապեն, իսկ
պարապողներին էլ գժուար չէ դրանից յետ կացնել:
Խիստ շատ. անդամ երեխաներին օնանականու-
թեան վարժեցնողն դայեակներն են լինում:

Երբեմն դայեակի խնամքին յանձնուած երե-
խան երկար ժամանակ չի քնում և խանդարում է
նրա քունը. այն ժամանակ նա երեխալին հանդրս-
տացնելու համար սկսում է խտտել երեխալի սե-
ռական զործարանները. այդ երեխալին զիւր է զա-
լիս և նա շուտով վարժւում է այդ բանին և սո-

*) Տես իմ «Մեր նեարդեր» գըքցիլ:

փորում է ինքն էլ անել միւնոյնը, այսինքն՝ սկսում
է օնանականութեամբ պարապել:

Նկատուած են դէպեր, երբ դայեակների
շնորհիւ, հեշտասիրական ակնյայտնի զգացողու-
թեամբ օնանականութիւն երեացել է մինչեւ ան-
դամ շատ փոքրահասակ, նոյն իսկ ինն ամսական
երեխաների վերայ:

Երեխաները շատ բան էլ իրենք են սովորում
մեծերից:

Նրանք ուշադրութեամբ հետեւում են մեծերի
ասածներին ու արածներին, և որովհետեւ մեզանում
ամենեին չեն քաշւում երեխաների առաջ ամենա-
անպատկառ բաներ խօսելու, ուստի և երեխաները
այդ ամենը սովորում են նրանցից:

Յամենայն դէպս, երեխաների ներկայութեամբ
եղած անբարոյական վարմունքներն և խօսուած-
ները հող են պատրաստում օնանականութեան
համար:

Երեխաները խիստ շատ անգամ կանանց և
տղամարդկանց յարաբերութիւնների մասին ան-
թուլատրելի զրոյցներ լսած լինելով, շատ անգամ
լիսոյ սկսում են իրենք էլ ամեն բանի մէջ այդ
մասին ակնարկ փնտուել: Այդպիսի տպաւորու-
թիւններից կամաց-կամաց երեխաների երեակայու-
թեան մէջ առաջանում են ամենաանպատկառ պատ-
կերներ:

Այս ամենը, ուրիշ պատճառների հետ միացած,
պատճառ են լինում օնանականութեան և սեռալին
վաղաժամ յարաբերութեան:

Եւ ահաւասիկ, ամենաչնչին առիթը բաւական
է, որ երեխան անձնատուր լինի այդ արատին:

Նրան կարող են այդ բանը սովորեցնել նաև
հասակակիցները, որոնք արդէն դրա համն առաջ
են լինում:

Օնանականութեամբ պարապող տղան երբեմն
մինչեւ անգամ բաւականութիւն է ստանում իւր
ախտը տարածելուց, ուստի և աշխատում է իւր
ընկերներին էլ սովորեցնել:

«Գուցէ, ասում է պ. Տարնովսկին, նրան այդ
բանն անելու զրոյում է նաև, ի հարկէ անզիտակ-
ցաբար, իւր եսական ցանկութիւնը, որով ուզում է
թեթևացնել ախտի ծանրութեան զգացմունքը. չէ՞
որ հոգեկան ճնշումն միշտ նուազ նկատելի կլինի,
թէ որ ուրիշն էլ վիճակակից է նրան»:

Նրա չանքերը յաշողուում են միայն այն դէպ-
քում, եթէ ընկերները բարոյապէս փչացած են. այս-
ինքն եթէ նրանք որոշ չափով նախապատրաստուած
են այդ ախտն ընդունելու:

Բժիշկները վկայում են, որ փակ ուսումնա-
րաններում աշակերտները երբեմն խմբովին են այդ
ախտով պարապում:

Առ հասարակ պէտք է նկատել, որ այն ա-
մենը, որ զրգուում է երեխաների երեակայութիւնը
և նպաստում է բարոյականութեան փչացման, նր-
անց նախապատրաստում է մատնուելու զանազան
ախտերի, ի թիւս որոց նաև օնանականութեան:

Այդ կողմից քիչ վնաս չեն պատճառում լու-
սանկար պատկերները, որոնց վերայ նկարած են

լինում մարդ ու կնոջ ներքին մտերմական կեանքի պատկերներ: Թէպէտ այդպիսի պատկերներն արգելուած են, բայց հեշտութեամբ ընկնում են տղաների ձեռքը:

Դատարկ կեանքը, պարապմունքի և խելացի խաղերի բացակայութիւնը երեխաների օնանականութեամբ պարապելու ամենազլխաւոր պատճառներից մէկն են. նմանապէս, միատեսակ կեանք վարող երեխաներն էլ ընդունակ են այդ ախտին նուիրուելու:

Պարապութիւնը վտանգաւոր է նրանով, որ դայթակղեցնող պատկերներ է ստեղծում և օնականութեան առիթ տալիս:

Ի դէպս, վնասակար է նոյնպէս և հեծանիւր, որովհետեւ սեռական գործարանները շարունակ քըսում են հեծանուի նստարանին, այնպէս որ ցանկալի է, որ մինչև 17—18 տարեկան դալլ պատանին հեծանիւր չգործածէ: *)

Այդ կողմից մանաւանդ կորստարեր է ուղղահայեց ցցուած ձողը, որին տղանները ձեռներով ու ոտներով փաթաթուած, բարձրանում են ու իջնում:

Եցդ դէպքում առաջացած հաճելի զրգիռը, որ ստանում են սեռական մասում ձողի վրայով վայր սլլալիս, կարող է օնանականութեան պատճառ լինել:

Ծանր օդի մէջ նստուկ կեանք վարելը, ուրիշ պայմանների հետ միացած, խիստ տարածուած

*) Տես իմ «Մարմամարդութիւն» դրսյկը:

պատճառ է համարւում օնանականութեան համար, որովհետեւ այդպիսի կենցաղավարութիւնը քնքշացնում է երեխալի մարմինը, նրան մեղկ դարձնում:

Նկատուած է, որ այն երեխաներն են օնանականութեամբ պարապում, որոնք շարժուն խաղեր չեն սիրում և նրանց չեն մասնակցում:

Երկար նստելուց արիւնը հաւաքւում է սեռական գործարանների շրջանում և նրան գրգիռ պատճառում:

Շատ վնասակար բան է, որ ծնողները իրենց 8—9 տարեկան երեխաներին ստիպում են ուսումնարանից գալուց յետոյ էլ օրական 2—3 ժամ պարապել: Երեխաների համար այս բանը անպատճէ չէ անցնում. ուղեղի յոդնածութիւնը վաղ սկսում է զրգուել նրանց հեշտանքը, որ երեան է զալիս անբնական զօրութեամբ:

Ահա թէ ինչու մտաւոր աշխատանքն ու ֆիզիքական աշխատանքը փոխէ փոխ պէտք է յաշորդեն իրար: *)

Մեծ յիմարութիւն է երեխաների մտաւոր զարգացումն զօրով առաջ տանելը:

Փափուկ գահաւորակների վերայ խիստ երկար նստելուց, մանաւանդ տարուայ տաք եղանակին կամ ձմեռը տաք սենեակի մէջ, տաքացնում է սեռական գործարանի շրջանը, ալսինքն արիւնը լլցում է սեռական գործարանի մէջ, նրան զրգուում

*) Տես իմ «Երիտասարդութիւն և ծերութիւն» գրքոյկը:

է և հետեւաբար կարող է օնանականութեան ծր-նունդ տալ:

Օնանականութեան պատճառներից մէկն էլ ձաղկաւելով ծեծելն է, որ դժբաղդաբար դեռ գործ է ածւում ընտանիքների և ուսումնարանների մէջ:

Յիրաւի, ձաղկաւելի հարուածներից զրգուում են նեարդերը, որի հետեւանքն է լինում նաև սեռական գործարանների զրդիոր, որը և կարող է մարմնաշարժութեան պատճառ դառնալ:

Պր. Լեզգաֆար այսպէս է ասում այդ մասին. «Ձաղկաւելով ծեծելով՝ զրգուում են մարմնի այն մասը, որ հարուստ է արեան անօթներով ու նեարդերով, որոնք դուրս են գալիս այն բուներից, որոնցից անցնում են նաև սեռական անդամների նեարդերն ու արեան անօթները»:

«Այդ անօթների ընդհանուր լինելուց առաջանում է այն, որ արիւնը յետովքում հաւաքուելուց, արիւնը մեծ ոյժով ու առատութեամբ լցուում է նաև սեռական գործարանների մէջ, որով և նրանց զրգուում. հետեւաբար յետովքի զրգուուելուց առաջանում է նաև սեռական գործարանների զործունէութիւնը»:

Այս վերջին հանգամանքը մանաւանդ վնասակար է աշակերտական հասակի համար, երբ որ հէնց այդ գործարանները զարգանում են. այդպիսի արհեստական զրգիոններ հեշտութեամբ կարող են ախտի հասցնել, որ և նկատուել է այդպիսի դէպքերում:

Առհասսարակ ծեծելու ամօթալի սովորութիւնը, անշուշտ, կարելի չէ տանելի համարել ոչ ընտանիքի և ոչ էլ դպրոցի մէջ: *)

Այս կարգին է պատկանում նաև մի ուրիշ պատիժ. այդ՝ երեխային տանը չոքեցնելն է, երբ նա մէսակ մնացած ձանծրանում է. և այդ հանգամանքը խիստ շատ անդամ զրդիչ է լինում մարմնաշարժութեամբ պարապելու, քանի որ այս դէպքում էլ զլխաւոր գեր խաղացողն է արեան հաւաքուելը և զրա հետեւանք՝ սեռական անդամների զրգիոր:

Կասկած չկայ, որ կերակուրը, հագուստը, ծրխելը, ոգելից խմիչքներ գործածելը, ընտանեական կեանքի վատ հանգամանքները—այս ամենը այս կամ այն միջոցով կարող են օնանականութեամբ պարապելու զրդիչներ լինել. այս ամենի մասին մենք քանիցս առիթ ենք ունեցել խօսելու մեր զրքոյկների մէջ, մանաւանդ, «Մարմնամարզութիւն» զրքոյկի մէջ. բայց այստեղ էլ երկու խօսք միայն ասենք, որպէս զի կրկնութեան մէջ չընկնենք:

Երեխաներին մանաւանդ վնասակար է մանանելը, դարչինը, զափրանը, վանիլը, սուրճը, ոգելիցխմիչքները և զանազան նախանաշի նիւթեր: Կարելի չէ ասել, թէ «առողջ երեխային ամեն ինչ օգտակար է»—վնասակար կերակրի ներգործութիւնը վաղ թէ ուշ իւր վատ հետեւանքները կունենայ:

Անկարդ կեր ու խումը վնասակար է նաև մեծերին. և արդարեւ, շատ ընտանիքներում երեխա-

*) Տես իւմ «Հիւանդ և առողջ երեխայի ոգին» զրքոյկը.

ները մինչև ժաշ՝ կոնֆետ, մրգեղէն, հաց են ուտում, կշտանում, իսկ ժաշին շատ քիչ բան են ուտում. սրանից առաջանում է ստամոքսի երկարատեսանդարմունք, իսկ սրա հետևանքն էլ լինում է նուազարիւնութիւն, դժգունութիւն, նեարդայնութիւն, և մի խօսքով նրանք պատրաստում են օնանականութեան:

Քնելուց առաջ ուտել-խմելը վնասակար է թէ մեժերի և թէ փոքրերի համար:

Երբէք չպէտք է թոյլ տալ, որ երեխան արտաքնոյում երկար ժամանակ՝ մնայ, մանաւանդ վնասակար է, որ երկու-երեք հոգի միասին գնան:

Նեղ հանդերձը դրգուում է մորթը, վարտիքի զրպաններն աւելորդ և վնասակար են. վարտիքը պէտք է այն ծեփ լինի, որ հագնում են նաւաստիները. վնասակար է նոյնպէս աղջկերանց սեղմիրանը (կորսէտը): Իսկ նրանց հազած այն զգեստը, որ բաց է թողնում կուրծքն ու թեկերը, պատանիների մէջ ցանկութեան կրքեր է յուզում:

Ծխախոտ ծխելը զրգուում է նեարդերը և արգելք լինում երեխաների բնական զարգացման. այդ պատճառով էլ ծխախոտը շատ արտների առիթ է դառնում երեխաների համար:

Ո՞չ թէ աշ կողքի, հապա մէշքի վերայ պառկելը, տաք ննջարանը, փետրէ անկողինը, տաք վերմակը շատ վնասակար են. նրանք մարմնին քընքանք են պատճառում և նեարդերը զրգուում: *)

*) Տես իմ «Քուն և երազ» գրքոյկը.

Պառկելուց առաջ շատ թէ կամ չուր խմելը (կարելի է միայն երեք ժամ առաջ), այն վատ հետեանքն է ունենում, որ առաւոտեան դէմ միղափամփուշար լցուած լինելով՝ ճճշում է նաև միւս գործարանների վերայ, պատճառ դառնում արիւնով լցուելուն և առիթ տալիս օնանականութեան:

Շատ վնասակար է նաև առաւոտները զարթնելուց յետոյ տննպատակ անկողնի մէջ պառկած մնալը. երեխանները տնզիտակցաբար ձեռք են տալիս սեռական գործարաններին, որից և կարող են օնանականութիւն սկսել:

Երբեմն միւնոյն սենեակի մէջ քնում են մարդու կին և երեխանները. յայտնի են գէպքեր, երբ 3—4 տարեկան երեխանները իրենց ծնողների ինչինչ գործերը տեսած լինելով, խաղի ժամանակ աղջիկների հետ միւնոյն բանն են կըկնել: Իսկ աւելի մեծանալով նրանք սկսել են կանխաժամ սեռալին յարաբերութիւն և օնանականութեամբ են պարապել:

Մի առիթն էլ սա է, երբ աղջիկ ու տղայ մի անկողին են պառկում կամ միատեղ բաղանիք ու լողարան են գնում:

Ներկայ կեանքը ալնպէս է կազմակերպուած, որ խիստ նպաստում է երեխալի սեռալին շրջանի զգայնութեան և զրանով էլ հնարաւորութիւն է տալիս սեռական կրքին արատաւոր գոհացում ստանալու:

Դաստիարակութեան մի քանի պայմանները — դայեակները, հասակակիցները և այլն, ժամանակից

առաջ զարթեցնում են սեռալին զգայութիւնը, հող պատրաստում օնանականութեան համար և նոյն իսկ այդ ախտին վարժեցնում. դուցէ նոյն իսկ բնութիւնն էլ, յայտնի պայմաններում, երեխաներին ստիպում է օնանականութեամբ պարապել, ինչպէս կարծում է պ. Մեշնիկովը *), հիմնուելով մարդու և կապիկների մարմնի կազմուածքի մի քանի հանգամանքների վրայ:

Օնանականութեան համար մի պատճառ էլ կայ, որ հէնց իրենց՝ սեռական անդամների զարգացման գործողութեան մէջ է գտնւում:

Բանն այն է, որ հէնց այն միջոցին, որ երեխալին սկսում է երազախարութիւն պատահել, 14—15 տարեկան հասակում, այդ լիովին բնական գործառնութիւնների շնորհիւ նա իւր սեռալին գործարանների շրջանում մի առանձին գրդիու է զգում, ուստի և ոչ մի զաղափար չունենալով այդ նոր երեսովի մասին, սկսում է յանախակի ծեռք տալ իւր սեռական գործարաններին:

Տաք ննջարանում կամ ամառ ժամանակ խեղզուկ սենեակում, փափուկ անկողնի մէջ պառկած միջոցին երեխան խիստ հեշտութեամբ առիթ է ունենում օնանականութիւն սկսելու:

Սովորաբար առաւտները սեռական գործարանները զրգուած են լինում և անդամը կանոնած: Մանկական այդ հասակում նոյն բանը, որ իւր վերայ է գարձնում երեխայի ուշադրութիւնը,

*) Տես իմ «Գոյութեան կոիւ» գրքոյկը.

աւելի երկարատև է լինում. սեռական գործարանների դիւրազգացութիւնը սաստկանում է. և այդ նպաստում է սեռալին կարիքի ախտաւոր եղանակով հոգալու սովորութիւնը:

Մի քանի հիւանդութիւններ կարող են երեխաների օնանականութեան պատճառ լինել. օրինակ՝ փորկապութիւն, լուծ, յետոյքի անցքի քոր դալր, փորի որդի պատճառով սեռական անդամի զլխիթլեփի տակ առատօրէն հաւաքուող մածուցիկ, սպիտակ նիւթը—«սպիդմա»:

Փորկապի միջոցին արիւնը խիստ լցւում է փորի խռոռչը, մանաւանդ երկայն աղիքը, որով և զրգուում է սեռական շրջանը. իսկ յայտնի է, սեռմային բշխները գտնւում են միզափամփուշտի ու երկար աղիքի միջև:

Որդերի միքանի տեսակն ապրում են երկար աղիքի մէջ և քոր առաջացնում և երեխալին ստիպում են քորել սեռական գործարանների մօտերքը:

Այդ միջոցին երեխան ակամայ կպչում է սեռական գործարաններին և այս անդիտակցական շօշափումից առաջ է զալիս կորստաբեր սովորոյթը, որ տանում է օնանականութիւն:

Քորն աւելի սաստիկ է լինում մանաւանդ զիշերները, երբ երեխան տաք սենեակում, տաք վերձակոյլ մածկուած քնած է լինում վիետրալից անկողնի մէջ:

Սպիտակ հիւթը, սպիդման, քիչ-քիչ է ծորում և ժառայում է այն նպատակին, որ թլիփը կամ սեռական անդամի գլխի կաշին, հեշտ շարժուի,

բայց եթէ փոքր ի շատէ աւելի արտադրություն
և հաւաքություն լինի կաշուի տակ, սեռական գոր-
ծարանները անմաքուր պահելուց զրգություն, ըոր
է առաջանում, և այն ժամանակ դարձեալ կարող
է օնանականութիւն առաջանալ:

Մի քանի սուր (Ճանր) հիւանդութիւններից
յետոյ սեռական գործարանները այնպիսի զօրեղ զըր-
գություն են ունենում, որ երեխաներն կամայակա-
մայ անձատուր են լինում օնանականութեան:

Ահաւասիկ ուրեմն տեսնում ենք, օնանակա-
նութեան պատճառները խիստ շատ են և այդ բո-
լոր պատճառների ներգործութիւնը արտայատւում
է սեռային դիւրազգացողութեան սաստիկ զարգաց-
ման գէպքում:

Այդ անկանոն զարգացումն առաջանում է երեխայի
անհմուտ հոգեբանական դաստիարատկութիւնից և մա-
նաւանդայն դէպքում, երբ ընտանիքի մէջ ժառանգա-
կան նշաններ են երեսում նեարդային խանդարման:

Անշուշտ, օնանականութիւն հեշտութեամբ
պատուաստում է այնպիսի երեխաներին, որոնց ֆի-
զիքական զարգացումը անկանոն է առաջանում:

Օնանականութեան պատճառը միւնոյն ժամա-
նակ ուրիշ կողմերից էլ վնասակար է մարմնակազ-
մի համար:

Նստուկ կեանքը կամ միակողմանի մարմնական
մարզութիւնները, ընտանեկան կեանքի անկանոն
պայմանները և այլն, այս ամենի հետեւանքը օնանա-
կանութիւն չէ միայն, այլ և մանկան մարմնա-
կազմի զարգացման խանդարումը:

ԺԱ

Օնանականութեան առաջն առնելու միջոցն
այն է, որ վերոլիշեալ պատճառները վերացուին:

Օնանականութեան առաջն առնելու գործը հեշ-
տանում է նրանով, որ դրա համար մեծաւ մասամբ
հարկ չկայ բացառիկ միջոցներ գործ գնելու, հապա-
միայն պէտք է աշխատել, որ ինչպէս ֆիղիքական,
այնպէս էլ մտաւոր դաստիարակութիւնը կանոնա-
ւոր առաջ գնայ:

Հարկաւոր է միայն, ասում է մի բժիշկ, որ
ծնողներն ու դաստիարակները մտքերում ունե-
նան, որ իրենց երեխան կարող է օնանականու-
թեամբ պարապելիս լինի: Երբեմն երեխայի այդ
արատով վարակուելու պատճառը իրենք, ծնող-
ներն են լինում: Մանաւանդ յատուկ ուշադրու-
թիւն պէտք է դարձնել այն երեխաների վրայ, որոնց
ծնողները զեռ մատաղ հասակից և նոյն իսկ ամուս-
նանալուց յետոյ էլ, արբեցութեամբ են պարապել
և ցոփ կեանք վարել:

Դժբախտ են այդպիսի ծնողների դաւակները.
պէտք է խիստ առողջապահական պայմաններով շրր-
ջապատել և առանձին ինսամքով ու չանքով դաս-
տիարակել նրանց, բայց որ զլխաւորն է, պէտք է աս-
տիճան առ աստիճան ամրացնել նրանց մարմինն
ու բարքը:

Սակայն ընդհանրապէս աւելի լաւ է այսպի-
սի երեխաների դաստիարակութիւնը յանձնել կողմ-
նակի մարդկանց, այսինքն գործ հասկացող բժիշկ-

ներին և մանկավարժներին և ոչ թէ ծնողներն երենք յանձն առնեն այդ գործը, թէկուղ դրանց կենցաղավարութիւնն ու բարքը այդ միջոցին համապատասխան լինէր ընդունուած ընտանեկան և հասարակական կեանքի պայմաններին:

Բայցի այդ, մեծ դեր կարող են կատարել ֆրէօքելեան կոչուած դպրոցները. բայց, դժբախտաբար, մեզանում այդպիսի դպրոցներ դեռ չկան: Եթէ չենք սխալում, կառավարութեան կողմից այդ բանին արգելը չկայ. բայց մենք չունենք մարդիկ, ժողովրդի ճշմարիտ բարեկամներ: Իսկ մեր գեղեցիկ սեոր—կանայք, դեռ քնած են: Ահաւասիկ կանանց համար մէկ ասպարէզ ևս և կոչում—ժամանակի ոգուն համեմատ բուն դիտական մանկավարժութիւն:

Դառնանք նեարդանոտ երեխանների առողջապահութեանը. — նեարդային համակարգութիւնը, հետևաբար նաև ամբողջ մարմինը կազդուրելու համար անդնահատելի ծառայութիւն է մատուցանում մարմինն լուանալը կամ լողացնելը. լուացումը անում են ամեն առաւօտ, բոլոր տարին:

Եթէ դրան աւելացնելու լինենք կանոնաւոր սնունդն ու մաքուր օդը, այն ժամանակ շատ լաւ հետեանքներ կոտանանք:

Սկզբում, երբ դեռ երեխան լուացման սովոր չէ, օրինակ չորս տարեկան հասակում, չը տարբութիւնը պէտք է Ռէոմիւրի չերմաշափով $24\text{--}25^{\circ}$ -ից պակաս լինի. բայց յետոյ կամաց կամաց կէս կէս աստիճան պակասացնելով՝ կարելի է հասցնել մինչև $20\text{--}16^{\circ}$ -ի. այդպիսի լուացումը պէտք է տես-

մէկ երկու բոպէ, որից յետոյ երեխայի մարմինը ցածաքեցնելով պէտք է նրան թողնել, որ սենեակում, բակում վազվզէ. յետոյ պէտք է տալ կաթ, կարագով հաց:

Լողացման համար գործ է ածւում սովորական կամ ռետինային սպունդ. պէտք է վեր առնել մի խոր ափսէ, մէջն ածել փոքր ինչ չուր և թէկի գդալով կէս գդալ աղ: Թէպէտ միջանի բժիշկներ խորհուրդ են տալիս աւելացնել ողի (սպիրտ) կամ օղի, բայց դա աւելորդ բան է. երեխանները, ինչպէս նաև հասակաւորները, պէտք չէ մօտ լինեն ոգելից խմիչքներին, որոնք, մանաւանդ երեխանների համար թոյն են: Օգտակար է նաև խնամքով լուանալ գաւակն ու նոյնպէս սեռական անդամի մօտիկ տեղերը:

Այսպիսի լուացում ամեն հասակի համար էլ օգտակար է. վարժուելու համար լուացումը կարելի է ամառուանից սկսել. ծանր գործ չէ. բայց պէտք է շարունակ և կանոնաւոր կերպով կատարել:

Անհրաժեշտ է երեխաններին յանախ լողացնել և այդ միջոցին պէտք է ուշադրութիւն դարձնել, որ սեռական զործարանների մօտերն էլ ամեն անգամ խնամքով լուացուին. դրանով քրտինքիսաշի և մարմնի վերայ բշտիկներ դուրս տալու առաջ առնուած կլինի: Ապա թէ ոչ առաջ կը գայ քոր, որի հետեանքն է ծեռներով սեռական զործարանները շօշափելու դիւրութիւնը:

Ինչպէս ասացինք, դայեակները խիստ յանախ երեխաններին վչացնելու պատճառ են լինում, ուստի

Երեխաները ամբողջապէս ժառաների խնամքին չպէտք
է թողնուին. պէտք է որքան կարելի է նրանց
քիչ հաւատալ և խիստ ցանկալի է, որ երե-
խաները լաւ ընկերների հետ լինին: Անհրաժեշտ է
մեծ ուշը դարձնել նրանց ընկերակիցների վրայ:

Պանսիոններում (զիշերօթիկ հաստատութիւն-
ների մէջ) հէնց որ նկատուեց, որ մէկը օնանա-
կանութեամբ է պարապում, անմիջապէս պէտք է
նրան, թէկուզ ժամանակաւոր կերպով, այսինքն՝
մինչեւ ուղղուելը, հեռացնել: Բայց այդ բանը շատ
մեծ զգուշութեամբ պէտք է անել. աւելի լաւ է
դորձը բժշկի լանձնել:

Պէտք է ամեն կերպ հոգս տանել, որ երեխա-
ները միշտ զբաղուած լինին. պէտք է նրանց տալ
նաև խաղալու կամ զուարճանալու միջոցներ: Բայց
մեզանում համարեա թէ չկան մանուկներին մատ-
չելի հասարակական խաղեր:

Շատ օգտակար են դաշտերում, պարտէզնե-
րում և անտառներում սարքուող կրթական խա-
ղերը, որոնց մասին մատնանիշ էինք արել մեր գրր-
քոյներից մէկի մէջ, որ «Մեր նեարդերը» վերնա-
գիրն է կրում:

Մանկական խաղերից ու զուարճալիքներից
ամենալաւը նրանք են, որոնց միջոցին շարժում-
ները բոլորովին աղատ կերպով բացօղեայ են կա-
տարւում, օրինակ գնդակախաղ, ձմեռները չմուշկով
ոլլալը ևալլն:

Փափուկ կահաւորակի վրայ նստելը ամենըին
էլ վնաս է, մանաւանդ երեխաներին. նմանապէս

վնաս է և երեխաներին բանտարկելը. զրա հետե-
ւանըր—ձանձրոյթից օնանականութիւնն է:

Ապա, հարկաւոր է, որ հազած շորերը լինին
աղատ, զիշերները՝ առանց անդրավարտիքի պառ-
կեն, անկողինը՝ չոր, ձմեռը՝ բրդեղէն թեթև վեր-
մակ, իսկ ամառը՝ վերմակի տեղ կտաւէ կամ քա-
թանէ սաւան, ձմեռը ննչարանի տաքութիւնը
14—15⁰ Ը-ի, ձեռները վերմակից զուրս. ցանկա-
լի է, որ երեխաները պառկածին պէս քնեն և ա-
ռաւոտները զարթնելուն պէս վերկենան:

Ամեն կողմից օգտակար է, որ երեխաներն
առաւօտեան զարթնելուց յետոյ անկողնի մէջ պա-
րապ պառկած չմնան:

Արդարեւ, մահճակալի մօտ օդը ամբողջ գի-
շերուայ ընթացքում բաւական փչացած է և այդ-
պիսի օդ շնչելը բաւական վնաս է բերում:

Խեղդուկ օդի մէջ երկար ժամանակ պառկե-
լուց՝ զլիսի ցաւ է առաջանում, մարդ թուլանում է
ու ծուլանում և երբեմն ամբողջ օրը վատ տրամա-
դրութեան մէջ է լինում:

Բացի այդ, երկար ժամանակ անկողնի մէջ
մնալով, երեխայի ոչնչով զբաղուած միտքը ալե-
այլ գայթակղեցուցիչ անուրջներ է ստեղծում:

Այս պարապութեան րոպէները մեծ մասամբ
մարմնաշարժութեան րոպէներ են:

Սենեակների վատ օդը մեղ ամենըիս էլ վնաս է.
վնաս չունի, թող սենեակները ցուրտ լինին, միայն
թէ մաքուր օդ լինի. իսկ մեզանում աստուածալին
այդ պարզեր բոլորովին անուշաղիր են թողնում:

Ուտելեղէնի վերաբերմամբ առ հասարակ օդակար է կէս-բուսական (վեգետերեանների) կերակուրը. այսինքն՝ աւելի կանաչեղէն, պտուղներ, և ըիչ մսեղէն։ Այդ մասին ես շատ անգամ խօսել եմ իմ գրքովների մէջ, և այժմ նորից կրկնելն աւելորդ է։

Ծնողների պարտականութիւնն է լաւ ուսումնասիրել իրենց զաւակների բնութիւնը, ոտքեց զլուխ ճանաչել նրանց, գիտենալ նրանց պէտքերը և այդ ամենից համապատասխան էլ կանոնաւոր կերպով դաստիարակել նրանց, որ ապագայ քաղաքցիներ, իրենց ազգի և հանուր մարդկութեան յոյսերն են։

ԺԲ

Սեռական շրջանի վերաբերմամբ երեխաների դաստիարակութեան ամենադժուար շրջանն այն է, երբ մօտենում է տղաների առաջին սերմնահոսութեան և աղջկերանց առաջին դաշտանի ժամանակը *): Այդ միջոցին պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել տղաների վերայ **):

Նատ օգտակար կլինէր և պէտք էլ է, որ ծնողները իրենց երեխաներին առաջուց նախապատրաստեն այդ սեռական կեանքին նոր շրջանի համար։

*) Տես իմ «Քուն և երագ» գրքոյկը։

**) Տես իմ «Մարմարզութիւն» և «Վեներական շիւանդութիւններ»։

Որովհետեւ այդ փոփոխութիւնը կատարւում է երեխաների 10—12 տարեկան միջոցին, (նայելով երկրի կլիմային և ուրիշ զանազան հանդամանքներին, որոնց մասին քանից խօսել ենք), ուստի կարելի էր նրանց կամաց-կամաց և զգուշաւոր կերպով մանօթացնել սեռական շրջանի նշանակութեան և նպատակի մասին։ Թէպէտ դժուար, բայց շատ օգտակար է այս բանը։

Յիրաւի, օնանականութեան և սեռական վազաժամ յարաբերութիւնների առաջն առնելու համար, շատ հոչակատոր բժիշկներ խորհուրդ են տալիս, երեխաներին՝ ասսը տարեկան հասակից սկսած յաջորդաբար և բարոյական տեսակէտով մանօթացնել սեռերի տարբերութեան և իւրաքանչիւր սեռի կոչման հետ։ Երեխ շատերը կասեն, որ սա նպատակայարմար խորհուրդ չէ։

Այս, եթէ ձենք կարողանայինք երեխաներին կրթել այնպէս, որ անդիտակ մնային այդ բոլորին, այսինքն եթէ կարողանայինք նրանց պահպանել այնպէս, որ նրանք, օրինակ, ականատես շինէին ընտանի կէնդանիների կցուելուն, կարողանայինք այնպէս անել, որ բնութեան այդ գործողութեան նշանակութիւնը հասկանալու հնարաւորութիւնը չունենալին, եթէ կարողանայինք մեծ ընկերներին կամ ժառաներին արգելել, որ նրանք այդ երեւոյթը ամենաանբարոյական ծեռվ չմեկնէին, այն ժամանակ, ի հարկէ, շատ լաւ կլինէր, որ երեխաներին այդ մասին բոլորովին անդիտակ թողնէինք, մինչեւ որ կատարեալ հասակն առնէին։

Բայց մենք անկարող ենք այդ ամենն անել,
ուստի և պէտք է յաշորգաբար և համաձայն ամեն
երեխալի անհատական տարբերութիւններին, նրանց
ժանօթացնենք այդ ամենի հետ. ամենառեղիզ ելքն
է սա զուցէ, փոքրագոյն չարիքն է: Ի հարկէ շատ
բան կախուած է ծնողներից:

Կարելի չէ միւնոյն եղանակը ամեն երեխալի հա-
մար անխափիր գործ աժել: Անհատականութիւնը շատ
մեծ նշանակութիւն ունի մանկավարժութեան մէջ:

Չի կարելի չխոստովանուել, որ մի քանի դէպ-
քերում երեխալին սեռական կեանքի մասին այս
կամ այն տեղեկութիւնները հաղորդելը, որքան էլ
ամենալաւ նպատակով և ամենազդոյշ, հմուտ կեր-
պով եղած լինի, կարող է ոչ ցանկալի հետաքրքրու-
թիւն առաջանել այնուեղ, ուր անվրդով միամտու-
թիւն էր տիրում:

Եւ վերջապէս՝ շատ ծնողներ և ուսուցիչներ
կան, որ ընդունակ լինէին այդ խնդրի մասին զրու-
ցաւրութիւն ունենալ մի այնպիսի սրբազան լրջու-
թեամբ, գործի առողջ հասկացողութեամբ և զու-
շութեամբ, որ անհրաժեշտ է այստեղ, որպէսզի
խօսակցութիւնը հակառակ, ոչ ցանկալի հետեւու-
թիւն չունենալ: Բայց և այնպէս, անշուշտ ամենքն
էլ համաձայն են, որ այսպիսի նիւթի մասին ա-
ռաջին խօսողը ծնողները պէտք է լինին, եթէ
միայն ունին հարկաւոր գիտութիւն ու զգուշու-
թիւն:

Այն, ինչ որ հայրն ու մայրը խօսում են երե-
խալի ներկայութեամբ, նրանց լուրջ, հողածու և

դէպի ինքն ունեցած սիրուց թելադրուած զրոյց-
ների աղդեցութեամբ, տպաւորւում է երեխալի հո-
գու մէջ, այնքան էլ հեշտութեամբ չի չնշում, և
նրա համար նշանակութիւնը չի կորցնում նաև
այն ժամանակ, երբ մէկը փորձէ ստորացնել, ցե-
խոտել այդ խրատները:

Բայց երեխաների հետ ունեցած խօսակցու-
թեան մէջ այդպիսի խնդիրներ շօշափելու առաջ-
նութեան իրաւունքը, — ասում է գոկառը Գրեին, —
ծնողները պիտի գործ գնեն միմիայն այն դէպ-
քում, երբ նրանց ու երեխաների միջև մի այնպիսի
անկեղծ, կատարեալ վստահելի լարաբերութիւն
կալ, որ նրանց իրաւունք է աալիս զատելու, թէ
արգէն ժամանակ է:

Եւ լիրաւի, երեխան, ասենք, եօթ աարեկան
հասակում գեռ չի քրքրում բանի հիմքը հասկանա-
լու համար, չի հետաքրքրում ծաղիկի աճեցողու-
թեամբ, հապա քաղում է ծաղիկը և զմայլում է
նրա պսակը դիտելով. միայն ժամանակի ընթաց-
քում նա կսկսի դիտելով ցողունը՝ ցած իշնել և հե-
տաքրքրուել ծաղիկի կազմութեամբ:

Այսպէս է մանկան բնոյթը, սորա մէջն է
նրան պահպանող անմեղութիւնը, որ միաժամա-
նակ նրա թէ՛ պաշտպանութիւնն է և թէ զէնքը:

Նա ըմբռնում է և մոռանում բնազդմամբ.
մի բանի մէջ մաքով խորասուզում է զժուարու-
թեամբ և շատ էլ խորը չի թափանցում:

Ուստի և երեխաների հետ մինչև տասը տա-
րեկանը, բաց խօսակցութիւններ ունենալ այդպիսի

խնդիրների մասին այն նպատակով, որ նրա մէջ երկիւղ ծնեցնենք, թէ մի՛ գուցէ իւր սեռական գործարաններին և առհասարակ առողջութեանը վնասէ, անշուշա պէտք է լիովին նպատակայարմար համարուի, և այդպիսի խօսակցութիւնները պէտք է որքան կարելի է կանուխ սկսուին:

Սակայն բաց խօսակցութիւնները, որոնց նպատակն է պարզել սեռային յարակցութեան նշանակութիւնը, անկասկած, շատ գէպքերում բոլորովին աւելորդ են. իսկ մի քանի գէպքերում և ուղղակի վնասակար են:

Թող երեխան երեխայ էլ մնայ, այնքան ժամանակ, որքան որ բնութիւնից սահմանուած է:

Մեզ հարկաւոր չեն այդ փաղահաս փոքրիկները, որոնք իրենց անակրնկալ հարցմունքներով ու ու նկատողութիւններով հէնց այն է շուարեցնում են մեզ:

Երեխան—պատուական ծաղկի կոկոն է...

ԺԴ

Մեր ասածներն աւելի պարզ ու լրիւ դարձնելու համար փոքր ինչ մանրամասնօրէն խօսենք պատանեկութեան մասին:

Մանկութիւնից յետոյ գալիս է պատանեկութիւնը. եօթնից մինչև տասնեչորս տարեկան հասակը, մանաւանդ գրա վերջին կէս մասը, իսկապէս փոխանցական շրջան է մանկութիւնից գէպի պատանեկութիւն. այդ միջոցին է, որ սեռական

շրջանի ֆիդիոլոգիական նշանակութիւնն աւելի ու աւելի զգալի է գառնում, մանաւանդ աղջիկների զգացմունքների ու նեարգերի վերայ:

Նրանք կամաց-կամաց թողնում են իրենց խումանիկները, չափազանց գատարկ ու լուռ ընկերունի համարելով նրանց և սկսում են ապրել աւելի երեակայութեամբ, որ քանի գնում աւելի ընդարձակ ծաւալ է ստանում:

Նրանց մաքերը, թէպէտ առանձին խորութիւն էլ ստացած չլինին, բայց և այնպէս սկսում են վճռել բազմաթիւ տեսակ-տեսակ հարցեր, որոնց մէջ յետին տեղը չեն բոնում նաև այնպիսի հարցեր, որոնք նուազ կամ առաւել չափով ուղղակի սեռական շրջանին են վերաբերում:

Տղաների մանկութիւնն աւելի երկար է տեւում, բայց նրանց հարցասիրութիւնն էլ սուաչագիմում է—նրանց զլխումն էլ խլրառում են այս ու այն մաքերը, առաջանում է ցանկութիւն աւելի խորը թւոփանցելու շրջապատող կեանքի խորերը և լուծել բազմաթիւ խնդիրներ:

Այժմ նրանց զարգացման ընդհանուր ընթացքի մէջ աւելի չափով երեան է զալիս իրենց անձնական փորձի որոշ ուղղութեամբ ներգործութիւնը. նրանցից շատերը յայտնի կերպով սկսում են հակումն ցոյց տալ կամ գէպի արտաքին դործնական գործունէութիւնը և կամ գէպի ներքին հողեկան, մատաւոր աշխատանք:

Արա հետ միասին յանախ նրանց մէջ երեան է զալիս նաև հետաքրքրութիւն սեռային շրջանի

վերաբերմամբ, զոնէ հաղիւ թէ նրանց մէջ գտնուին շատերը, որ կեսնքի այս խարհրդպաւոր կողմի վրայ երեծնակի մտածուծ չլինեն:

Եթէ նրանց մէջ որոշ հակումն էլ առաջացած չլինի դէպի միւս սեռը, բայց էլի նրանց մէջ ձնունդ են առնում ինչ-ինչ հարցեր:

Ո՞վ պէտք է նրանց այդ հարցասիրութեան գոհացում տայ:

Աղջիկներն ու տղաները մեծ մասամբ սեռական կեանքի վերաբերմամբ զիտում են իրենց ընկերուհիներին ու ընկերներին. սակայն յաճախ երեխաների վատահութիւնը զրաւում են նաև սպասաւորները, իսկ քիչ դէպօւմ—ժնողներն ու վարժապետները:

Աշակերտական կեանքը իւր նոր տպաւորութիւններով, զգացմունքներով ու մաքերով, նոր ընկերներով, բարեկամներով քիչ չեն թուլացնում այն կապերը, որով երեխան տառաջ կապուած էր ընտանիքի, ժնողների հետ:

Ընկերուհիներն ու ընկերները, անկասկած, կարող չեն նրանց շատ բան այնպէս լսւ բացտարել ու հասկացնել. բայց սովորաբար երեխաներն այդպիսի խնդիրներում խոյս են տալիս ժնողներից, աւելի ևս ուսուցիչներից:

Ահաւասիկ այսաեղ ժանր զործ է բացւում ժնողների առաջ:

Կրկնում ենք, ժնողները պէտք է առաջուց հող պատրաստած լինին այդ բոպէի համար, երեխաներին սովորեցրած լինին իրենց սիրտն անկեղծօրէն բանալու իրենց առաջ:

Իսկ երեխաներին այդ բանին սովորեցնելու համար հարկաւոր է, որ երբէք անհամբերութեան կամ ինչ պատասխանելիքը չզիտենալուն պատճառովն նրանց հարցական հայեացքը հեռացնեն իրանցից:

Ամենից աւելի լաւն է բանը սկսել բացատրելով ծաղիկների անելու և նրանց սեռալին յարաբերութիւնների հանգամանքները. այդ ժամանակի հարկէ, երեխան կամաց-կամաց կծանօթանայինպիսի բառերի հետ, ինչպէս են՝ արոկան, իգական գործարաններ, սերմ, պտուղ և այլն:

Այնուհետեւ կարելի է սկսել նաև միջատների, սողունների, թռչունների, կենդանիների և, վերջապէս, մարդու ծնուելու նկարագիրը պատմել:

ԺԴ

Օնանականութեան առաջն առնելու միջոցների մասին խօսելիս՝ պէտք է ուշագրութիւն դարձնել նաև ընթերցանութեան վրայ:

Ընթերցանութիւնը մանկական հաստիկում կարող է մեծ ժառայութիւն մատուցանել օնանականութեան առաջն առնելու համար:

Սակայն պէտք է զգուշութեամբ վերաբերուիլ զէպի ընթերցանութիւնը և կարգալու զրբերն ընտրութեամբ տալ:

Շատ մեծ վնաս են հասցնում այնպիսի զրբւածներ, որոնց մէջ կնոշ և աղամարդու փոխարձ յարաբերութիւնների վերաբերմամբ լրբենի պատկերներ են նկարագրուած:

Պէտք է խիստ մեծ ընտրութիւն անել, թէ
կարելի է տալ երեխային կարդալու:
Անպատկառ բովանդակութեամբ զրբեր կար-
դալու վնասակար հետևանքներն անհամար են:
Պէտք է աշխատել, որ երեխաների ծեռքը չընկնի
այնպիսի զրբեր, որ կարող են նրանց մէջ հեշտա-
սիրութիւն զարթեցնել:

Ցանկալի է, որ մանուկների ընթերցանու-
թիւնը բազմազան լինի. հէքիամներն, ի հարկէ,
լաւ հէքիամներն, այսինքն՝ այնպիսիները, որոնց
մէջ սարսափ ու սնոտիապաշտութիւններ չկան,
պէտք է փոխէ փոխ կարդացուին հանրամատչելի
դիտական զրբոյկների հետ, օրինակ՝ բնագիտու-
թեան, աշխարհագրութեան, պատմութեան վերա-
բերեալ զրբոյկների հետ *):

Երբ տղան գալիս է այն տարիքին, որ արդէն
երեան է դալիս սերմի պարբերական հոսանքը—
սերմնաթորութիւնը, պէտք է այդ միջոցին առան-
ձին խնամքով վերաբերուել այդ նոր երեան եկող
երեոյթին:

*) Խիստ ցանկալի էր, որ ժողովրդի ընթերցանու-
թեան համար Լուսնկեփիչե կազմած (Պաւենկովի հրատա-
րակութիւն) համարեա ամբողջ հանրամատչելի—դիտա-
կան զրադարանը թարգմանուած լինէր. Թէպէտ այդ զրբ-
քյկներից մի բանիսն արդէն թարգմանել են, օր. Հայր
Յակոբ Սառիկեանը և Գ. Գալստեանը, բայց միայն մի
կաթիլ է ծովի մէջ. Թողլ միքանի հողի փողով իրադորձեն
այդ սուրբ գործը, որպէս ինելացի «էժանազին ժողովրդա-
կան զրադարան»:

Պէտք է ի նկատի առնել, որ սերմը սերմնա-
պարկերում հաւաքուելով, զրգոսւմ է նրանց, և
այդ զրգիոր տարածում է բոլոր նեարդային հո-
մակարդութեան վրայ *

Որպէս զի սերմնաթորութեան շրջանը խա-
ղաղ, բնական ընթացքով առաջանայ, պէտք է
տղից հեռացնել այն ամենը, որ կարող է վրդովել
այդ խաղակութիւնը. իսկ զրա համար էլ պէտք է
նրան աղատ պահել այն ամեն բաներից, որ կարող
են զրգիոր պատճառել նրան. օրինակ անպարկեշտ
բովանդակութեամբ զրբերը, պատկերները և այն.
այլ չպէտք է նրան դաս պատրաստելու համար
երկար ժամանակ նատած պահել դասարանում կամ
տանը, որովհետեւ այդ բանը կարող է վնասակար
ներգործութիւն ունենալ նրա նեարդային զրու-
թեան վրայ և ուրիշ պայմանների հետ միացած,
կարող է օնանականութեան պատճառ դառնալ:

Երկու խօսք մանկական զրբերի մասին:

Ով որ եղել է Ամերիկայում, համարեա ամենըն
էլ ողեօրութեամբ խօսում են ամերիկացի երեխա-
ների մեծ մասի կայտառ, ժիր, զուարթ, ինքնու-
րոյն և զօրեղ բնաւորութեան մասին:

Եանկիների նոր սերնդի այս արժանիքները
մանաւանդ աչքի են ընկնում համեմատած ուրիշ
ազգերի մեղկ, թախմալից, տխուր, նեարդախտոտ
երեխաների հետ:

Այս աչքի զարնող տարբերութեան պատճառն,
անկասկած, զաստիարակութեան եղանակն է:

*) Տես իւր «Մարմամարզութիւն» գրքոյկը.

Գործնական և անկիները մեծ նշանակութիւն
տալով առողի և կենսուրախ բնաւորութեանը, բո-
լոր ուժով և ամեն միջոցով աշխատում են իրենց
երեխաների մէջ զարգացնել այդ լատկութիւնները.
Խակ ամերիկացիների միջացները խիստ շատ են:

Այդ միջոցների մէջ խիստ կարեոր և առա-
շիններից մէկն է մանկական ընթերցանելի գրքերի
ընարութիւնը:

Ամերիկացի մանկավարժները մանուկների հա-
մար օգտակար են համարւում միայն այն գրքերը,
որոնք այսպէս կամ այնպէս նպաստում են մա-
նուկներին կայտառութիւն և կենսուրախութիւն
ներշնչել, ալսինքն՝ կայտառութեան օրինակ են
բովանդակում իրենց մէջ:

Ուստի ամերիկացիները մանուկների համար
ամենալաւ դիրքն են համարում այն, որի մէջ գոր-
ծող անձերը—մանուկ լինին, պատանի, թէ հա-
սակաւոր, ունենան զօրեղ բնաւորութիւն, առողի
ու խիզախաբար յաղթեն արգելքներին, լինին յու-
սով լի, կեսնքի ժանրութիւնից չճնշուող, այլ ընդ-
հակառակն, ամեն տեսակ ծախորդութիւնների դէմ
համարձակ, կուիւ մզող մարդիկ:

Տիսուր, թախմալի գրքեր, որոնց մէջ միայն
կեսնքի մութ կողմերն են նկարագրուած, որոնք
ընթերցողների աչքը արցունքով են լցնում, առա-
մավրութիւնը խանգարում, Ամերիկայի մանկավար-
ժութիւնը չի ընդունաւ:

Այլ և, Ամերիկայում առանձին ուշադրութիւն
էն զարձրել զուարթարար, երդիմական գրքերի

վերայ. նմանապէս և մտնկական առողջ երդիմանքը
զարգացնում են երդիմաբանական լաւ գրքերի, եր-
դիմական պատկերների շնորհիւ: Ամերիկացիք խիստ
մեծ նշանակութիւն են տալիս այս բանին:

Մանկութիւնն, տառւմ է մի ամերիկացի ման-
կավարժ, պէտք է աշխատել, որ կեանքի ամենա-
ուրախ շրջանը լինի. իսկ կեանքի տիսուր ու մուլթ
կողմերի հետ երեխան առանց գրքերի էլ կարող
կլինի ժանօթանալ:

Տալ երեխայի ձեռքը այնպիսի գրքեր, որոնց
մէջ նկարագրուած են կեանքի ծախորդութիւնները,
ճակատագրի անարդարութիւնները, աղքատութիւնը
և այլն—այդ նշանակում է թունաւորել մատադ
կեանքը և ամենավաղ հասակից պատանիների մէջ
ատելութիւն ներշնչել դէպի կեանքը:

Խիստ ցանկալի է, որ խելացի, հէնց խելացի
կերպով վերաբերուին դէպի մանկական գրքերը,
մանաւանդ մանկական վիստասանութիւնը: Ժամա-
նակ է դարթնելու:

ԺԵ

Ի՞նչ պէտք է անել, երբ նկատուի, թէ աղ-
չիկը կամ տղան օնանականութեամբ է պարա-
պում—ահա մի խնդիր, որի վրայ շատ և շտա-
ծնողներ և ուսուցիչներ ստիպուած են դլուխ մաշել:

Դրա համար որևէ նշգրիտ կանոններ չկան:

Դաստիարակներն իրենք պէտք է միջոցներ
գտնեն երեխաների ախտին դէմ դնելու համար:

Յահախ նրանք ստիպուած են լինում իրենցից
հնարել այնպիսի միջոցներ, որոնք ամենայարձարն
ու օգտակարն են իւրաքանչիւր առանձին դէպքի
համար:

Օնանականութեան դէմ կռուելու նպատակով
գործազրուող միջոցների ընարութիւնը կախուած է
երեխալի անհատական առանձնայատկութիւններից,
ծնողների փորձառութիւնից ու հմտութիւնից,
նրանց մտաւոր զարգացման աստիճանից և ուրիշ
շատ պատճառներից, ահա ինչ են ասում բժիշկները
այդ խնդրի մասին:

Օնանականութեան դէմ մաքառելու համար
հարկաւոր է բժշկի միջամտութիւնը:

Նախ և առաջ նա պիտի որոշէ, թէ ի՞նչ
պատճառներ զրկում են երեխալին օնանականու-
թեամբ պարապելու. թէ որ զրա պատճառը հի-
ւանդութիւն է, որպէս ասուեցաւ վերը (փոր-
կապը, լուծը, քորը), ապա հարկաւոր կլինի,
ի հարկէ, բժշկել հիւանդութիւնը:

Իսկ եթէ զրա պատճառը դաստիարակու-
թեան պայմանների մէջ է, այն ժամանակ բժշկին
պիտի միանալ նաև դաստիարակը՝ երկուսով ախ-
տի դէմ կռուելու համար:

Այս շատ դժուար զործ է և ինչքան շատ
ժամանակ անցած լինի օնանականութեամբ պա-
րապելու սկզբից մինչեւ զրա երեան գալը, այն-
քան էլ աւելի դժուար է բժշկութիւնը:

Լինում են դէպքեր, երբ հէնց որ ծնողները
պարզ ի պարզով խօսում են երեխաների հետ այդ

ախախ մասին, երեխաներն իսկոյն էլ ձեռք են քա-
շում այդ վատ սովորութիւնից:

Բայց այսպէս լինում է այն ժամանակ միայն,
երբ օնանականութեամբ պարապողը պատահաբար
է սկսել այդ և բոլորովին առողջ երեխայ է. այդ
դէպքում նա հեշտութեամբ է զրանից յետ կանգ-
նում:

Ի դէպ է ինձ այստեղ գարձեալ զգուշացնել
ծնողներին ու մանկավարժներին, որ զգոյշ լինեն
անհիմն կասկածանքներից և անաեղի ու անզգու-
շաւոր միջամտութիւն չանեն, որովհետեւ այդ բանի
համար բացի էտիքական չանքից՝ պէտք է ու-
նենալ նաև գործի հմտութիւն, նուրբ ըմբռնողու-
թիւն. պէտք է ճանաչել երեխալի հոգին:

Երեխալին իւր վատ սովորութիւնից յետ կանգ-
նեցնելու միջոցները մեծապէս կտխուած են տա-
րիքից. եխէ ախտաւորը 10—12 տարեկանից մեծ
է, նրա վերայ կարող է ներգործել դաստիարակի
խելացի խրատները:

Բայց եթէ աղան կամ աղջիկն այդ տարիքից
փոքր են, այն ժամանակ հազիւ թէ հնարաւոր լի-
նի գործադրել վերեկ միջոցը:

Մի բանի դաստիարակներ խորհուրդ են տա-
լիս վախով ազգել օնանականութեամբ պարապող-
ների վերայ. զրա համար ախտաւորի տռաջ ամե-
նավառ գոյներով նկարագրում են օնանականու-
թեան հետևանքները:

Եւ այդ անելիս աշխատառում են մէ այնպիսի
խոր և ուժեղ տպաւորութիւն գործել, որ նա

զրայ, թէ ի՞նչպիսի ծանր հիւանդութիւնների պէտք
է ենթակայ լինի ապագայում, և վախի ազդեցու-
թեամբ թողնէ օնանականութիւնը:

Եթթադրում է, որ անծնապաշտպանութեան
բնազդը յաղթող կհանդիսանայ այն ամենավնասա-
կար ախտի վերայ:

Այս, հաշիւն ուղիղ է, բայց դա գործադրուե-
լիս միշտ ցանկալի նպատակին չի հասնում:

Բացի զրանից, մեզանում այնքան շատ են
երեխաների աչքը վախեցնում, որ նրանք արդէն
վարժուում են զաստիարակների ու ծնողների գործ
զրած այդ միջոցներին և զրանց նշանակութիւն
չեն տալիս:

Միւս կողմից էլ, թէ որ երեխան նեարգալին-
է, տպաւորուող և օնակականութեամբ էլ երկար
ժամանակ է պարապած, այն ժամանակ այդ ախ-
տի հետևանքների մասին չափազանցրած նկարա-
զիրը նրա վերայ ճնշիչ տպաւորութիւն է գոր-
ծում:

Երեխան կսկսի շարունակ մտածել օնանակա-
նութեան անձխիթար հետևանքների մասին և նրա
մէջ կարող է իւր առողջութեան վերաբերմածը
ցաւագար կսկսածամտութիւն ընկնել:

Օնանականութեան զէմ կռուելու համար գոր-
ծադրուող բոլոր միջոցների էլ վախճանական նպա-
տակն այն է, որ երեխայի ուշագրութիւնն այդ
պարապմունքից հեռացնելով ուրիշ կողմ ուղուի:

Պէտք է այնպէս անել, որ օնանականութեամբ
պարապողը բոլորովին մտահան անէ իւր ախտը:

Դրա համար շատ լաւ միջոց է օնանապարհոր-
դութիւնը—կենցաղավարութեան պայմանների փո-
փոխութիւնը, նորանոր տպաւորութիւնները: Բայց
այս միջոցը մատչելի է, զժբաղդաբար, միայն հա-
րուսաներին,

Միւս միջոցն է—շարունակ և կանոնաւոր
կերպով մի որեկից գործով զբաղուելը:

Կարելի է մատնացոյց անել թեթև արհեստ-
ների վերայ, որոնք սակայն փոխէ փոխ պիտի փո-
խարինուին խաղերով ու զուարծութիւններով:

Այսպէս, օրինակ, կաղմարարութիւն, լուսա-
նկարչութիւն, բանջարանոցի և պարտիզի թեթև
աշխատանքը, տախտակից զանազան իրեր սղոցելը,
և այս ամենը, ՚ի հարկէ, պէտք է լինի երեխայի
անհատական ընդունակութիւնների համեմատ և
ընտանիքի միւս անդամների աչքի առաջ, որովհե-
տեւ եթէ երեխան մենակ մնալու լինի, կարող է
հանգստեան ժամին իւր միտքը բերել իւր սովո-
րութիւնը:

Պարապութիւնն և առանձնութիւնն են ամե-
նից աւելի արգելը լինում օնանականութեան ար-
ժամանակի լինելուն:

Եղել են գեպքեր, որ աշակերար օնանականու-
թեամբ սկսել է պարապել ամառուայ արձակուր-
դին, երբ պարապութիւնն ու միւս հանդամանք-
ները նրան զրգել են այդ բանին. բայց երբ որ
սկսուել է ուսումը և աշակերար խորասուզուել է
իւր սովորական զբաղմունքների մէջ, նա կամաց-
կամաց մռացութեան է առել իւր ախտը:

Այնպիսի զուարճութեան միշտները, ինչպէս
են թատրոնը, պարերեկոյթը, բալեար, արդէն ինքն
ըստ ինքեան վաս ներդործութիւն են անում երե-
խայի երևակալութեան վերայ, մինչև անդամ իրենք
կարող են օնանականութեան պատճառ լինել:

Մանաւանդ բալեան առանձին վնաս է պատ-
ճառում երեխային արբունքի սկիզբները:

Թէ որ աղջիկը կամ տղան երբեկցէ տեսել են
գայթակեցուցիչ պատկերներ, ապա նրանք, մե-
նակ մնացած միշտին, հեշտութեամբ տշխառում
են իրականացնել այդ:

Օնանականութեան դէմ կռուելու համար կա-
րող է նպաստել օնանականութեան մասին լու-
կադմուած զիրքը:

Մենք խորը համոզուած ենք, յանախ ասում
էր պր. Տարնովսկին, որ հասունութեան մօտեցող՝
հետեւաբար փոքր ի շատէ զարդացած, պատանինե-
րին կարելի է այս կամ այն զիրքը տալ:

Այդ բանք նրանց վրայ վնասակար ազգեցու-
թիւն չի ունենալ, ընդ հակառակն, բազմաթիւ
փորձերն ապացուցանում են, որ այդպիսի զրբեր
կարդալուց, որոնց մէջ նկարազրած է ախտը բոլոր հրշ-
մարտութեամբ, անլինելի օդուտներ են ստացւում:

Բայց ուրիշ բժիշկներ խորհուրդ չեն տալիս,
ասելով, որ այդպիսի զրբերը արատաւորներին կա-
րող է բոլորովին լուսահատութեան մէջ ծգել և
նրանց վրայ ննջիչ ներդործութիւն ունենալ:

Օնանականութեամբ պարապող տղի ձեռքը
մեծ ընտրութեամբ պէտք է զիրք տալ:

Կասկած չկայ, որ այն զրբերը, որոնց մէջ
օնանականութեան հետեանքները չափաղանցրած
նկարագիր ունին, ժամը, ճնշող տպաւորութիւն են
անում երկար ժամանակ օնանականութեամբ պա-
րապած ախտաւորների վերայ:

Պարզ և մեկին կազմուած զիրքը կարող է
բանաւոր բացատրութեան տեղը բռնել. գիրքը ան-
վճռական դաստիարակներին հանում է իրանց գժուար
կացութիւնից և յարմար ժամանակին տղի կամ
աղջկայ ձեռքն ընկնելով օգուտ է բերում:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ երեխա-
ների օնանականութեան դէմ մաքառելիս պէտք է
անհրաժեշտաբար պահպանել բոլոր առողջապահա-
կան պայմանները սնունդի, քնելու, հանգստի, զգես-
տի, բաց օղի մէջ մարմինը կազդուրելու, լուաց-
ման և այլն պայմանների վերաբերմամբ, որոնց մա-
սին վերեւում խօսուեցաւ:

Օնանականութեամբ պարապող երեխայի հետ
արհամարհանքով պէտք չէ վարուել. չէ՞ որ աղջիկ
կամ տղայ այդ ախտին անզիտաբար են անձնա-
տուր լինում. գուցէ և մեղաւորը ծնողներն իրենք
լինին: Բարի և սիրալիր վարմունքով աւելի բան
կարելի է անել. գժբաղդ երեխաներին, որ «ապա-
գայ մարդկութեան յոյսն են», աւելի հեշտ կերպով
կարելի է ուղղել:

Ի միշի այլոց, կարդալով այս զրբոյկը ամեն
մէկը, որ ենթարկուած է այդ ախտին—օնանիզ-
մին, տարակոյս չկայ, որ ինքը յօժարակամ ձեռք
կվերցնէ ընդ միշտ այդ չարերից. չպէտք է վհա-

տուել, լացով ու արտասուբով ոչինչ չի կարելի
անել:

Խառն սննդարար կերակուր (կաթ, ձու, մրգե-
ղէն, բանջարեղէն և միս) և սառը շրով ամառը
լողանալը 3—5 րոպէ, ոչ աւել, իսկ ծմեռը սառը
շրով բոլոր մարմինը տրորելը, և նոյնպէս երկաթ
և սնդիկ բժշկի խորհրդով,—այդ ամենը կը կաղ-
դուրեն հիւանդի ուժերը:

Ամեն մի երեխայ, որ դժբաղդութիւն է ունե-
ցել ալդ վնասակար ախտն սովորելու, պէտք է
ինը իւր բժիշկը լինի. դրա համար հարկաւոր է,
որ ճիզ գործ դնէ, կամք ունենալու:

Այստեղ մեծ նշանակութիւն ունի ներշնչումը
և ինքնաներշնչումը, որ զօրեղ միշոց է:

Ո՞վ մայրեր, աշխատեցէք մանկութիւնից ձեր
երեխաների մէջ հաստատել կամքի ոյժ—դրանով
արդէն շատ բան արած կինէք ձեր զաւակների
դաստիարակութեան համար. օդնեցէք, որպէս զի
ձեր որդիքը ճանաչէն իրենք իրենց:

ՄԻ ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ ԷԼ

Քանի մարդ պատանեկան հասակում չափա-
ւոր կեանք վարած լինի, ինչքան քիչ ֆիզիքական
ոյժ վատնած լինի, այնքան էլ նրա մարմնակաղմը
երկար ժամանակ կ'պահպանէ ապրելու և իւր դորձը
կատարելու ընդունակութիւնը:

Ինչքան արբունքը վազաժամ լինի, այնքան էլ
ժերութիւնը շուտ կհասնի. երիտասարդական կեանքի

գեղսութիւնները պատճառ են լինում սեռական
գործարանների արագ ուժասպառ լինելուն:

Պատանեկութեան մեղքերը՝ ծերութիւնն է բա-
ւում,—այսպէս է ասում ժողովրդական իմաստուն
առածը:

Մաքի ուժը խիստ մեծ դեր է կատարում մեր կեան-
քի մէջ. ինչպէս որ համեղ խորտիկների վերայ մտածե-
լուց զրգութում է թուքի գեղձերի և ստամոքսի գոր-
ծունէութիւնը, իսկ տիսուր մաքերը արցունք են առա-
ջացնում, ալդպէս էլ սեռական կեանքի մասին մտածե-
լուց կարող են զրգութել սեռական գործարանները:

Իսկ սեռական կեանքի մասին մտածելու խնդրի
ծանրութիւնը նրա մէջն է, թէ ի՞նչ վերաբերմունք
է ցոյց տալիս երեխան դէպի այդ խնդիրը:

Մէկ անզլիացի մանկավարժ ասում է, որ եթէ
պատանին ուղում է լաւ մարդ զառնալ, նա՝
ամեն բանի վրայ, որ իւր կեանքի մէջ հանդի-
պում է, պէտք է մտածէ այնպէս, ինչպէս որ յա-
տուկ է լաւ մարդուն և եթէ նրա մաքի մէջ ծնունդ
են առնում նաև սեռական կեանքի խնդիրներ,
պէտք է շատ զգոյշ լինի, որպէսզի մի գուցէ զէ-
պի այդ խնդիրը վերաբերուի մի այնպիսի ցոփու-
թեամբ, որ սովորաբար տեսնում է հասակակիցների
և, դժբաղաբար, նաև հասակաւորների մէջ:

Երբ որ մարդ լրջօրէն ուսումնասիրում է սե-
ռական կեանքի խնդիրները, նրա մէջ հաստատում
է նաև առողջամիտ վերաբերմունք դէպի այն ամենը,
որ այս կամ այն կերպով պատկանում է այդ շրջա-
նին, իսկ այս բանը կարող է մարդուս ազատ պա-

հել բաղմաթիւ վաղանցուկ հաճոլքներից, որոնք մարդուն գրաւած՝ շատ յանախ և հեշտութեամբ ցաւալի հետեւանքների են հասցնում:

Կասկած չկայ, որ սեռական կեանքի խնդիրներն ուսումնասիրելուցը՝ պահպանում է մարմնակազմի գորութիւնը, էներգիան:

Այդ խնդիրներն ուսումնասիրելիս՝ մարդուս խելքն ակամայ ապշում է ակնյայտնի տեսնելով, թէ ինչպէս բնութիւնը իւր նպատակին հասնելու համար զարմանալի նպատակայարմարութեամբ գործ է գնում իւր միջոցները:

Ծանօթանալով բնութեան օրէնքների, դրանց երեսիթների և այն տանջանքների հետ, որ առաջանում են այդ օրէնքները խանդարելուց, մատադանաս երիտասարդութիւնը բոլորովին այլ հայեացը է կազմում սեռական կեանքի վերայ, քան թէ այն՝ որ մեծ մասամբ տեսնում է նրա մէջ:

Շատ բան, որ երիտասարդները թոյլ են տալիս որպէս մի անհրաժեշտ ու արժանի բան, կհամարէին ոչ միայն աւելորդ, այլ և անբարոյական, թէ որ լրջորէն ծանօթանալին խնդրին:

Պատանին պէտք է ինքը իւր կամքի ուժով դէմ գնէ այն անմաքուր մաքերին, որոնք վատ ձանօթութիւնների և իրերի սխալ ըմբռնողութեան հետեւանք են: Թոյլ կամքով պատանին կարող չէ դէմ գնել մեր ներկայ կեանքի ընձեռած դայթակդութիւններին:

Ո՞րքան վտանգներ կան պատանու առաջ՝ վաւշութիւն զրգուող վատ զրբեր, լնկերների ու

հասակաւորների շրջան, ուր կոպիտ ու լիրբ պատմութիւններ են պատմւում, վատ թատրոններ, ուր ներկայացւում են անպատճեառ պիեսներ ու նոյնպիսի երգեր երգւում: Պէտք է պատանին այս տմենից խոյս տայ, թէ որ ուզում իւր պատաններութիւնն անցկացնել այնպէս, որ ապագայում ստիպուած չինի զջալ:

Վատ բաների շատերը գործւում են մտքի ապականութիւնից. արատների մեծ մասը սկսւում է վատ մաքերի ու ապականուած երեակայութեան շնորհիւ, — անմաքուր մաքերը գառնում են սովորական, երեակայութիւնն էլ նրանց լրացնում է իւր ստեղծած պատճեններով և կամաց-կամայ մարդը ընկնում է միատեսակ մաքերի ու վարմունքների իշխանութեան տակ, այնքան ամեն բան ցած է գառնում նրա մէջ:

Մի փոքրիկ օրինակ. ահաւասիկ այս երիտասարդը. նա իւր սիրած օրիորդի հետ եղած միջոցին մատածում է միայն առաջիկայում նրա հետ ունենալիք մարմնաւոր մերձաւորութեան վրայ: Նա ամուսնանում է. ալր և կին լինել ցանկացողների մէջ անհրաժեշտ է հոգեկան կապ. եթէ մէկը երեւակայութեան մէջ պատճերացնում է մարմնաւոր մերձաւորութեան պատճեններ միայն, դրանով նա բայցալում է իւր առողջութիւնը, այլ և ստորացնում է իւր սիրած օրիորդին:

Երկու տարբեր սեռերի պատճեանող երիտասարդների մէջ լաւ, անկեղծ բարեկամմութիւնն երկսի համար էլ օգտակար է և հարկաւոր. բացի այն, որ

այդպիսով նրանց մէջ մտքերի փոխանակութիւն է լինում և հնարաւորութիւն են ունենում միմեանց լաւ ճանաչել, դա հանգուցիչ ներգործութիւն է ունենում երևակալութեան վրայ: Մինչդեռ մեղանում ի՞նչքան ազշիկ ու տղայ հեռու են մնում իրարուց:

Անշուշտ՝ ոչ մի սեռ ոչ մի առաւելութիւն չունի միւսից:

Կեանըի միատեսակ բարելազող հանգամանքների մէջ աղամարդն էլ, կինն էլ կարող են զարդացման միւնոյն աստիճանի վրայ կանգնել—թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս:

Աղջիկը ոչնչով պատանուց պակաս չէ. պատանին ոչնչով վատ չէ աղջկանից—թէ մէկը և թէ միւսը թէ որ գիտակցաբար ծգտելու լինին դէպի կատարելութիւն, կարող են հասնել դրան՝ որքան որ դա ընդհանրապէս հասանելի է մարդուս համար:

Եթէ մի որեկիցէ շրջանի մէջ տղամարդը աւելի կարող է բան անել, քան թէ կին մարդը, մի ուրիշ ասպարէզում էլ զերազանցութիւնը կնոշ կողմն է լինում:

Տղամարդը կարող է ծանր բաներ վերցնել, կինն էլ աւելի զրկանքների ու ցաւի է գիմանում. տղամարդն ամենալաւ աշխատաւորն է, կինն էլ ամենալաւ գթութեան քոյր է և ալին:

Թէ տղայ և թէ աղջիկ միատեսակ մտաւոր ընդունակութեան տէր են. նրանց կարդացածը միւնոյն գրքերն են, գրում, նկարում, երդում են հասասարապէս լաւ:

Շատ անգամ (և հարկաւոր է, որ միշտ այդպէս լինին), տղայ ու աղջիկ միատեղ են ուսանում, և այդ ժամանակ պատահում է, որ աղջիկները տղաներից յաւ են սովորում. զրա պատճառը ոչ թէ այն է, որ աղջիկը տղից խելօք է, այլ այն որ աղջիկներին նպաստում են մի քանի յատկութիւններ, որ նրանք աւելի ունին, քան թէ աղաները. օրինակ, համբերութիւն, ուշադրութիւն:

Պէտք է որ միշտ տղայ ու աղջիկ միենոյն ընտանիքի անդամների նման, միատեղ խաղալին, *) սովորեին և զբունէին. այն ժամանակ թերեւս շատ չէին լսուի այնպիսի խօսքեր, որ արհամարհանքով արտասանում են աղաները—են աղջիկների հետ չեմ խաղալ. դրանով ասես թէ նա աղջիկներին համարում է սաւորին կարգի արարածներ, մոռանալով, որ իւր մալրն էլ փոքր ժամանակն աղջիկ է եղել—ասում է կազիիուսը:

Պէտք է որ պատանիներն էլ—աղջիկ ու տղայ, միատեղ ուսանէին, աշխատէին, միատեղ էլ վայելէին հանգիստն ու զուարճութիւնները, որ անհրաժեշտ է աշխատանքից լիտոյ. այս բանը նրանց կոռվորեցնէր հասկոնալ և գնահատել միմեանց և նրանց միշե անկեղծ, բարեկամական կասեր կառաջացնէր:

Այսպիսի հանգամանքներում պատանիների երեւակայութիւնը չէր ապականուիլ և, հասկանալի է, որ նրանց խօսակցութեան նիւթն էլ կոպիտ հանաքներ ու առախեր չէին լինիլ, ինչպէս որ յանախ լինում է տղամարդկանց մէջ:

*) Տես իմ «Կին և տղամարդ» զբքութեան մասին:

Պատահին կ'վարժուի իւր սեռական կեանքի
վրայ նայել նոյն բարոյական հայեցակէտով, ինչ
հայեցակէտով որ պիտի նայի իւր բոլոր վարժունք-
ների վրայ:

Աղջկայ կամ կնոշ հետ ծանօթանալիս՝ պէտք
է տղամարդը լիշէ այսքան, որ նա էլ նոյնպիսի
մարդ է, ինչպէս և տղամարդը, նոյն բարոյական
պահանջներով, նոյն մտաւոր շահերով:

Երկու սեռի մօտիկութիւնը թող այդ ամենա-
բարձր խնդիրների զիտակցութեան վրայ լինի հաս-
տատուած: Թող այս ամեն լաւ կողմերը, որ կան
տղամարդու մէջ—անվրդով բնաւորութիւն, կամքի
հաստատութիւն, արտաքին կեանքի հմառութիւն
—թող այս ամենը նպաստամատոյց լինին կնոշ
նուազ փորձառութեան, դիմացկոտութեան. իսկ կնոշ
զուարթութիւնը, նրա հոգու նրբազգացութիւնը
և տղաւորուող միտքը օգնեն պատահիներին ելք
զոնելու իրանց անհանգստացնող խնդիրների մէջ
և լուսաւոր հանդիստ մացնեն իրանց աշխատաւոր
կեանքի մէջ:

Կոտարեալ անձնազսպութիւնն ու ոգու յաղ-
թանակը մարմնի վրայ՝ հեշտութեամբ ձեռք չի
բերւում. միտքը կամ խելքն ու զգացմունքը շա-
րունակ մաքառում են իրար հետ մարդուս վար-
ժունքների վրայ դերիշխանութիւն ձեռք բերելու
համար, և շատ շանք պէտք է դործ դնել, որպէս
զի միտքը այնքան հասունանայ, որ դերիշխող դառ-
նայ զգացողութիւնների վերայ:

Կարելի է զգացմաւնքի աղդեցութեան տակ

առաջացած մաքերի ուղղութիւնը փոխել, և այդ
կողմնակի ճանապարհով՝ մաքի միջոցով, կարելի է
աղջել և զգացմունքի վրայ:

Մարդուս միտքը պէտք է ձգտի գէպի բարոյա-
կան մաքրութեան բարձր իդէալը. մտաւոր աշխա-
տանքը, բարոյական բարձր խնդիրներ վհռելու ձրդ-
տում, ուրիշ մարդկանց ներքին կեանքը հասկանա-
լու ուշադիր վերաբերմունքը, այս ամենն այնքան
կարող են զբաղեցնել մեր միտքը, այնպիսի հարուստ
նիւթ տալ նրան, որ զգայնական ստոր միտումների
համար ժամանակ էլ չի լինիլ:

Եւ որովհետև սեռային կեանքի շրջանում ֆի-
զիքական արտայալատութիւնները սերտ կապ ունին
մտաւոր գործունէութեան հետ, ուստի մտքի մի
այնպիսի բարձր թոհքը ժամանակ պիտի բացա-
կայեն նաև անմաքուր, զգայնական միտումները:

Պէտք է համոզուած լինել, որ զգայնական մի-
տումները վնասակար ու վտանգաւոր են և հար-
կաւոր է, որ պատահիները կռուեն զրանց դէմ և,
վստահ կարող են լինել, թէ հէնց որ ուղեղի մէջ
երեան գայ մի այնպիսի միտք, նոյն միջոցին էլ,
մաքերի համանմանութեան շնորհիւ, կծագի մի ու-
րիշ միտք—զգայական միտումների վնասի մասին:

Վերջապէս այդպիսի զէպերում սաստիկ շար-
ժողութիւնը, մարմնական աշխատանքը կարող են
շլատել այդ կացութեան ոյժը:

Աշխատանքը, որ ուշադրութեան և ոյժերի
սպառումն է պահանջում, անշուշտ կվանէ այդպիսի
զգայական մաքերը. արագ քայլուածքը, փայտ կոտ-

րելը կամ սղոցելը, բանջարանոցում կամ պարափ-
ղում աշխատելը—անկասկած այս ամենը օգուտ
կբերեն: Վերջապէս պատաճուն մեծ օգուտ կարող
է տալ, այսպէս ասած, բարեզորժական դորձունէու-
թիւնը. և այս բանը պէտք է պատաճու համար
անմիջական պարտականութիւն դարձնել—մերծա-
ւորների օգտին աշխատել և իւր պարապ ժամերը
նրան նուիրել:

Ուրիշների կարիքներն ու գժբաղդութիւնները
հանաչելու համար նա այնքան ժամանակ և ոյժ
պիտի դործ դնէ, մանաւանդ այդ գժբաղդութիւն-
ները թեթևացնելու համար, որ բնականաբար նրա
միտքը պաշտպանուած լինի որեիցէ անարժան մի-
տումներից:

Ահաւասիկ զբաղիտութիւն տարածելը—ինչ-
պիսի՛ համասփիւռ խաւար է շուրջանակի—քա մի
սուրբ գործ է և պահանջում է մտաւոր բաւական նիգ:

Առ հասարակ՝ եթէ երիտասարդ աղայ կամ
աղջիկ ցանկանան իրենց անծը նուիրել մերծաւոր-
ներին օգնելու գործին, միշտ կարող են ընդարձակ
ասպարէզ դանել իրենց գործունէութեան համար.—
կան «սպիտակ խաչի» ընկերութիւն, «Ժուժկալու-
թեան» ընկերութիւն, ինքնակրթական խմբակ-
ներ *) և այլն:

Ամենամեծ սխալը, որ կարող է անել պատա-
նին, այդ այն է, եթէ իրեն նպատակ է գնում անձ-
նական երշանկութեան հասնելու:

*) Տես իմ «Ժուժկալութիւն» և «Երիտասարդու-
թիւն և ծերութիւն» գրքեցիները:

Անձնական երշանկութեան ցնորքի ետևից
ընկնելով, նա շարունակ պէտք է անդոհունակու-
թիւն և հիասթափութիւն զգայ. մինչդեռ եթէ
ուրիշների մասին հոգալիս լինի, նրանց համար եր-
շանիկ կեանք առաջացնելու, կամ գոնէ նրանց
թշուառութիւնը մեղմելու լինի, անշուշտ իրեն
երջանիկ պիտի զգայ, որովհետեւ կսաանայ բարոյա-
կան բարձր գոհացում, զիտակցելով, թէ իւր օրերը
զուր չեն անցնում...

Այս բանս նրանց կիրկէ կեանքի ամեն մի
հարցին թեթևաբար վերաբերութելուց և անպառուղ
երկբայութիւնից, սկեպտիցիզմից:

Զալէտք է մոռանալ, որ տղիտառթիւնը շաա
անդամ բազմաթիւ չարիքների պատճառ է լինում,
ուստի և ամեն մի պատանի պարտական է աշխա-
տել իւր բազմակողմանի կրթութեան վրայ, որով
և նա իւր լուման ծգած կլինի մարդկութեան ա-
ռաջադիմութեան և բարօրութեան գործի մէջ...

P. S. Յուսսանք, որ այս զրբոյկս էլ որոշ
չափով կարող է օգտակար լինել ծնողներին և երկ-
սեռ մատաղահաս սերնդին՝ նրանց զաստիաբակու-
թեան և կատարեալ առողջութեան վերաբերմամբ:

Հարկաւոր է այստեղ էլ կրկին ու կրկին պըն-
դել, որ մինչեւ ամուսնանալը կուսութիւն պահպա-
նելու, և հետեաբար, ամեն տեսակ ախտերի ու
հիւանդութիւնների (ինչպէս օրինակ սիֆիլիսը և
արբեցողութիւնը) առաջն առնելու համար գործա-
դրուելիք ամենազլիսաւոր միջոցներից մէկն էլ խառն

ուսումնարանի տիպարն է, այսինքն երկու սեռի
ծիատեղ ուսուցումը. նոյնպէս և բոլոր ուսումնա-
րաններում առողջապահութեան և բնագիտական
հիմունքների գասաւանդութիւնը, որի մասին շատ
անգամ խօսել են աշխարհիս բոլոր գիտնականներն
էլ. իսկ այս բովածիս մեղ հարկաւոր են և շատ
կարևոր են, որ ամեն տեղ էլ ֆրէոբելեան դարոց-
ներ բացուին:

Տղամարդն ու կինը, նախ քան ամուսնանալը,
պէտք է լաւ իմանան առողջապահութեան և ման-
կավարժութեան հիմունքները. այսպիսի գէպըում
միայն կարող կլինեն կանոնաւոր կերպով դաս-
տիարակել երեխաններին—ապագայ քաղաքացիներին,
մարդկութեան և ազգի լոյսը:

Պէտք է լուսալ, որ ֆիզիքական ժուժկալու-
թիւնից կծի բարոյական կատարելութիւն, մտա-
ւոր զարգացումը կհասնի իւր լրութեան և անհա-
տական ու հասարակական երշանկութեան իդէալը
մերչապէս կդանուի...

Ուր որ լոյսն է, այնտեղ էլ կեանքը...

Ճանաչեցէք ճշմարտութիւնը և ճշմարտու-
թիւնը ձեզ ազատ կ'կացուցանէ ամեն տեսակ
շարիքներից...

ԲԺ. Ա. Բ.

Պետերբուրգ.

20 մարտի 1904 թ.



3

6

9

2

8

մասնակիութեա

մ միջաւ

ո ար ալ

աթ

ՀՀ Ազգային գրադարան



NL0273076

2892

613.88
F - 91